Արդեօք չէ՞ք ցանկանայ լսել նրա պատմութիւնը, որը հետեւեալն է:

Ուրեմն՝

Քսան տարի հարածուելուց յետոյ Գերագոյն դատարանի կողմից ճանաչուած եմ անմեղ, ռեպրիտացիայի եմ ենթարկուած եւ որպէս իմ նախկին բոլոր իրաւունքներում վերականգնուած մէկը՝ գնում եմ անհատական թոշակների յանձնաժողովի նախագահ ընկ. Բալարէկ Մարտիրոսեանի մօտ (հետո ունեւարով գրողների միութեան յանձնարարականը) եւ խնդրում վերականգնել նախկինում ստացածս կենսաթոշակը:

Այստեղ ընկ. Մարտիրոսեանը թէ՛

- Քո անհատական թոշակը չենք վերականգնում:

- Ինչո՞ւ, - հարցնում եմ:

- Որովհետեւ դու սրանից 40 տարի առաջ Լենինի մասին Ֆելիետոն ես գրել:

- Ճիշդ է, - ասում եմ, - գրել եմ, բայց չէ որ Լենինն իր կենդանութեան ժամանակ ամխիտիա է տրուել բոլոր իր դէմ մեղանշաններին:

- Այո՛, - ասում է ընկ. Մամիկոնեանը, - ամխիտիա է տուել, բայց չի ասել, տարէք նրանց կենսաթոշակ տուէք, որ ապրեն:

Երբ նրա մօտից դուրս էի եկել՝ յանկարծ մտածեցի.

- Իսկ, հետաքրքիր է, Լենինն ասել է, որ նրանց կենսաթոշակը կտրէք, որ մեռնեն...

Անկարելի է որ ասէք: Ես 40 տարի առաջ Լենինին չէի ճանաչում, բայց յետագային, երբ ճանաչեցի՝ այժմ հաստատ կարող եմ պնդել, որ նա այդպիսի բան չէր ասի: Նա մեծ մարդ էր, սիրում էր հայ ժողովրդին եւ իր մասին գըրւած մի ինչ-որ ֆելիետոնի համար

չէր վեճացնի նրա միակ երգիծարանին:

Հա՛: Այնուհետեւ, խօսակցութեան ժամանակ, ես երկար աշխատեցի համոզել ընկ. Բալարէկին, թէ դրանից յետոյ Հայաստանի ղեկավարութիւնը այդ հանգամանքին տեղեակ լինելով հանդերձ՝ ինձ արտասահմանից կանչեց Հայաստան աշխատակցելու այն ժամանակուայ կենտրոնական օրաթերթ «Սորհրդային Հայաստան»ին, որի մշտական աշխատակիցը դարձայ ամբողջ 15 տարի, պայքարեցի սովետական խորթ լիդերների դէմ ողջ կարողութեամբս եւ արժանացայ անհատական կենսաթոշակի:

Բայց զուր անցաւ ջանքերս, չհամոզուեց նախագահը եւ դուրս եկայ նրա մօտից:

Երբ փոքր ու փոքր գնում էի փողոցով, երեւակայութեամբ բանար վերադարձայ եւ երանի տուի այն օրուան:

Ասում եմ՝ այն ժամանակ, երբ փորձեցի հացադուլ յայտարարել՝ ինձ բռնի կերակրեցին: Իսկ այսօր, ազատութեան մէջ, երբ ցանկանում եմ ապրել՝ բռնի սովամահութեան ենթարկուած...

Մեռնելը ինձ համար դժուար բան չէ, ի հարկէ, կարելի է եւ մեռնել, մանաւանդ հիմա, երբ արդէն 70ի մօտ մարդ եմ, քայքայուած առողջութեամբ, անվերջ հալածանքից չմեծ, կարիքի մէջ խեղդուած:

Ես հէ՛չ:

Ես աւելի շատ սովետական իշխանութեան մասին եմ մտածում:

Ձեզ յայտնի է, որ արտասահմանում դաշնակցութիւնը ապրում է բացառապէս մեր ղեկավարութեանը քննադատելով: Եթէ այդպիսի ծանր պայմաններում մեռնեմ՝ պիտի վեր կենայ եւ աշխարհով մէկ յայտարարի թէ՛ տեսէ՞ք, Լեռ Կամսարը իր ամբողջ կեանքի ընթացքում ծաղրեց մեր բոլոր սըրբութիւնները մենք նրան ներեցինք, իսկ սովետական կառավարութիւնը ընդամենը մի ֆելիետոնի համար սովասահութեան ենթարկեց նրան:

Այստեղ, յարգելի ընկ. Առուշանեան, կարելի է վերջացնել նամակիս առաջին հատորը (առանց նրա երկրորդ հատորով սպառնալու Ձեզ) եւ վերջակէս դնել:

Իմ խնդիրը վճռելիս՝ նայեցէ՛ք Ձեր յարմարութեանը:

Եթէ կը հաստատէք Գերագոյն դատարանի վճիռը իմ անմեղութեան մասին եւ կը վերադարձնէք ինձ իմ կենսաթոշակը՝ խորին շընորհակալութեամբ Ձեր երկու ձեռքերը կը սեղմեմ, իսկ եթէ կը դուռնէք, որ ոչչ իրօք որ ես իրաւունք չունեմ ապրելու, այն ժամանակ ի նկատի ունենալով, որ սովետական կողմից ստովամահութեան պատիժ նախատեսուած չէ՛ կը խնդրէի Ձեզ «ձերման կարգով» իմ սովամահութիւնը գնդակահարութեամբ փոխարինէք:

Լաւ է միանգամից մեռնել, քան մեռնել ամէն օր 24 ժամ:

Ինքնաստիքեան, ուրեմն, հասկանալի է, թէ ինչ անհամբերութեամբ եմ սպասում Ձեր պատասխանին:

Խորին յարգանքներով՝

ԼԵՌ ԿԱՄՍՍՐ

1956թ. Մայիսի 10

ՀՍՍՌ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Ծ. ԱՌՈՒՇԱՆՆԵԱՆԻՆ

Երկրորդ նամակ՝ ԼԵՌ ԿԱՄՍՍՐԻՑ

Յարգելի ընկեր Առուշանեան.

Սրանից ուղիղ 22 օր առաջ մի խնդրանքով Ձեր դուռը բախեցի ու մինչեւ օրս դրան վրայ կանգնած պատասխանի եմ սպասում, բայց պատասխան չկայ:

Ես Ձեզանից գատ ուրիշ բան չեմ տեղեր պիտի դիմեմ: Երեւակայեցէ՛ք եթէ ամէն մէկի դրանը 22 օր կանգնեմ՝ ի՞նչ կը լինի իմ վիճակը:

Յետոյ նկատի ունեցէ՛ք նաեւ այն, որ երբ մի մարդ իր լինել-չլինելու խնդիրը յանձնում է մի ուրիշի հայեցողութեանը, ապրում է սպասողական, տաքնապալի, դառնում է սնահաստ, հաւատում երազների, փոքարուն գանգան իմաստներ վերադրում, քնում է խռովայոյց ու յաճախ վատ երազներ տեսնում:

Պատմեմ մէկը դրանցից:

Անցեալ գիշեր երազումս ես մեռայ: Այո, երբ տեսայ ապրելու բոլոր ջանքերը զուր անցան՝ մեռայ:

Ու գնում եմ թաղման բիւրօ՝ Շահապուհուց տեղ խնդրելու:

Բայց ճանապարհին մտածում եմ: Երբ պետական բոլոր հիմնարկները չուղեցին որ ես գէթ մի երկու տարի էլ ապրեմ, թաղման բիւրօն ինչո՞ւ պիտի ինձ յաւիտեան մեռնելու իրաւունք տայ: Ձի տայ, ուրախացայ եւ քայլերս արագացնելով: Մինչեւ դիմումիս վրայ մակագրելը ես երկար կ'ապրեմ դեռ:

Բայց... որքան մեծ եղաւ զարմանքս, երբ Շահապուհին դիմումս կարդալուն պէս մակագրեց՝ այն էլ դրական իմաստով:

Ի՞նչ կարող էի անել: Օրգերը ձեռքիս, ախար-տրտում քայլեցի դէպի գերեզմանոց, սակայն մի թաքուն յոյս սրտումս, թէ գերեզմանոցի դրանը կը կարգամ՝ «բատուգման պատճառով գերեզմանոցը փակ է» ու մի որոշ ժամանակ էլ կ'ապրեմ:

Գերեզմանոցի դրանը, սակայն, ոչինչ չէր գրուած: Ու ես հանգըստարան մտնելուց առաջ հետեւեալը մտածեցի:

- Հէ՛յ աշխարհ, - ասում եմ, - ինչո՞ւ ամէն բան էսպէս թարս ես ստեղծել: Այն հիմնարկները, որոնք ստեղծուած են կեանք տալու մարդկանց՝ անվերջ մերժում են, իսկ այն հիմնարկները, որոնք մահ են մատակարարում, այսպէս սիրալիր են վերաբերում դէպի յաճախորդի կարիքները...

Իսկ որքան լաւ կը լինէր աշխարհը, եթէ ճիշդ դրա հակառակը՝ մահ տուող հիմնարկները անվերջ մերժէին մեռնողներին, իսկ կեանք տուողները անմիջապէս ընդունէին:

Այդ ժամանակ գիտէք ի՞նչ կը դառնար մարդկային ցեղը:

Կ'անմահանար:

Այսինքն այն, ինչ մարդկութիւնը երազել անգամ չի համարձակուած ներկայիս:

Մի երկրորդ երազ էլ եմ տեսել՝ ընկեր Առուշանեան, բայց թողնում

եմ երրորդ նամակիս պատմելու: Ես գիտեմ՝ Դուք դեռ երկար կ'ուշացնէք դիմումիս պատասխանը, որովհետեւ հարցը ծանրակշիռ է:

Թէեւ՝ ճամբարիս է, 40 տարի առաջ գործած «յանցանքը» ներուած է Լեւինի դեկրետով իր ժամանակին, ներուած է Հայաստանի կառավարութեան կողմից 1921 թուականին, այնուհետեւ ներուած է Գերագոյն դատարանի կողմից 1956 թուին, բայց կ'երեւի մի «յանցանքին» երբեք ներում քիչ է դեռ:

Միայն ընկեր Առուշանեան, եթէ պատահի այնպէս, որ Դուք կամենաք չորրորդ անգամ ներել ինձ, խնդրում եմ տակն աւելացնել՝ «ներումն վերջնական է եւ անբեկանելի»:

Թէ չէ ես այսքան բարի մարդիկ որտեղից ձարեմ, որ ինձ անվերջ ներեն:

Մնում նոյն յարգանքներով՝

ՆՈՅՆ ԼԵՌ ԿԱՄՍՍՐ

1956թ. Յուլիուսի 2

Երեւան

Վ. Ե. Ջ. Ա. Բ. Ա. Ն. ԽՈՐՀՐԴԱՍԵՆՆԻՈՒ ՀԱՄԱՐ

«Կարմիր Օրեր» գրքից

Գիշերս, երբ թոշակառու յանձնաժողովի նախագահ Բալարէկ Մարտիրոսեանը պաշտօնապէս յայտնեց, թէ քառասուն տարի առաջ Լեւինի մասին Ֆելիետոն գրելու համար ինձ թոշակ չի կարող տալ՝ վեր կացայ, երկինք գնացի, ասացի դրանմ նախապէս ինձ տեղ պատրաստեմ՝ գամ մեռնեմ, ապառուեմ սըրանց ձեռքից:

Բարձրանում եմ երկինք եւ ի՞նչ եմ տեսնում. սոսկալի խուճապ: Վերին էրուսաղէմի զարնիզոնի նաչալիկի հրամանով պատերազմական դրութիւն է յայտարարուած քաղաքում, ամէն ոք աշխատում է իրեն տուն դրել, փողոցները բոստապէս ամալանում են, խանութները փակում: Մի հրեշտակի հարցրի՝ ի՞նչ է պատահել, ասաց՝ վերջին դատաստանն է, ու առաջին հերթին դատուելու են այն բոլոր անպատեհ սատուածները, որոնք պաշտուել են մարդկութիւնից:

Եւ, իրօք, տեսնեմ դժոխքի կողմից գալիս է աստուածների էտապը՝ շրջապատուած սատանաների խիտ շղթայով:

Իսկ աստուածների շարքին վերջ չկար. գալիս, գալիս, գալիս եւ անհատում շարքերով:

- Տէ՛ր աստուած, ասում եմ, - մի՞թէ մարդիկ այսքան աստուած են պաշտել: Կամ՝ այսքան աստուած պաշտելուց յետոյ մարդիկ ինչպէ՞ս են ժամանակ գտել ուրիշ բան էլ անելու...

Առջեւից գնում էին կաւէ աստուածները, նրանց ետեւից տոտեմները, պաշտուած նախահայրը, հին յունական աստուածները՝ Ձեւսի գլխաւորութեամբ, ապա նրա տառացի թարգմանութիւնը՝ հայկական աստուածներն Արամազդի առաջնորդութեամբ, Եգիպտացոյ Ապիս ցուլը՝ իր սրբազան պոչով, յետոյ՝ ո՞վ գարմանք... մեր Լեւինը, մեր Ստալինը:

Ամէնից վերջը գալիս էր Իսրայէլի ժամանակաւոր Աստուած, Ահա-

րոնի շինած Ոսկէ հորթը՝ երկու սատանայի օգնութեամբ: Շատ էր փոքր աստուածը, ու ետ մնալու պատճառով մի սատանայ քաշում էր նրա վզից կապած թուղը, միւսը՝ ետեւից հրում:

Ես յաջողեցի ինձ մի կերպ դատաստանական դահլիճ գցել եւ ապշած դիտում էի շուրջս, սպասելով ի՞նչ պիտի պատահի:

«Ահեղ» դատաւորի աթոռին նըստած էր նա ինքը՝ արարիչը բոլոր արարածներին, ամենակալ, ամենակարող, միակ, կենտրոնական Աստուածը, որը միայն իրաւունք ունի մեծատառով գրուելու: Մի սերովբէ աջ կողմում, մի քերովբէ էլ՝ ձախում: Աչքերի մէջ բարկութեան շանթ ու կայծակներ: Մի կողմում տիեզերական դատախազը, միւսում՝ պաշտպանութիւնը:

Նախքան պրոցէսի սկսելը կարգացուց պաշտպանութեան դիմումը, որով խնդրում էր ազատ արձակել Ոսկէ հորթին, որպէս 18ը չըլրացած անչափահասի: Դատական կազմը ընդունեց միջնորդութիւնը, եւ կապը հորթի վզից արձակելով՝ բաց թողին անչափահաս աստծուն:

Պէտք էր տեսնել, թէ ուրախութիւնից ինչպէ՞ս էր այդ հորթը տըրտինդ տալիս երկնքի բացերում... Առաջ կանչուեց Ապիս ցուլը:

- Ձեր անո՞ւնը, զբաղմո՞ւնը, - հարցրեց ամենակարող Աստուածը:

Ապիսը նշանացի հասկացրեց, որ ինքը խօսել է իմանում եւ իր պաշտպանին ցոյց տուեց:

Պաշտպանը յայտնեց, որ իր պաշտպանեալի անունը Ապիս է, իսկ զբաղմունքն է՝ կովերին բեղմնաւորելը:

- Օ՞ո անասո՞ւն, - պոռաց Աստուածը, - մի պոզերի՞դ նայիր, մի պոչի՞դ նայիր, դու այժմ վիճակով ինչպէ՞ս յաջողեցիր դարբերով պաշտուել Նզդիպտացիներին:

Սրա վրայ պաշտպանը վեր կացաւ ու՝

- Տէ՛ր Ամենակալ, - ասաց, - այս կենդանունը դու ես ստեղծել, եթէ վատ բան է պող եւ պոչ ունենալը, ինչո՞ւ ես տուել: Ստեղծել ու ծաղրել՝ դա վայել է ինչը զլիւսին Աստուծուն: Իսկ ինչ վերաբերում է նրա պաշտամունքին, երեւակայեցէք, մինչեւ օրս էլ նա չի իմանում, որ ինքը պաշտուել է երբեւիցէ...

Դատավարութեանը, յունական Չեւսի եւ հայկական Արամազդի խմբակները, որպէս գուգահեռ աստուածութիւններ եւ միեւնոյն յանցանքում մեղադրողներ՝ մի պաշտպան էին բռնել, որն աշխատում էր արգարացնել իր պաշտպանեալներին, մեղքը երկրի աշխարհագրական կառուցուածքի վրայ բարդելով:

Նա ասում էր.

- Եթէ չլինէին Օլիմպոսն ու Մասիսը, եւ դրանց դաւանող ժողովուրդները ապրէին տափաստանում, այսօր ո՞չ Չեւս գոյութիւն կ'ունենար, ո՞չ Արամազդ:

Աստուած այս խօսքի վրայ կանչեց Լենինին ու Ստալինին ու՝

- Ձեր երկրի մակերեւոյթը ի՞նչ

Ո՞Վ Տ ԵՐ Պ Ի Տ Ի Կ Ա Ն Գ Ն Ի

(Շար. Ա. Էջէն)

Եւ մի երկուսի համար՝ «հասարակական» այդ պահանջը հնչել է որպէս մարտահրաւեր, որին ունկնդիր՝ նրանք գնացել են ամենաստոր քայլերի՝ գոհերին վերջնականապէս ոչնչացնելու, նշմարիտ գրականութիւնը կեանքից դուրս յայտարարելու համար: Իրար հետ մրցակցելով, գրել են անթոյատրելի յօդուածներ եւ ունեցել ելոյթներ, վստահ, որ պատասխան չի լինի, քանի որ հակառակ կողմը չի ունեցել այդ հնարաւորութիւնը: Դա քաղաքական հաշուեյարդար էր՝ յանուն շահախնդիր նպատակների եւ գրական աշխարհում բարձր դիրքերի»³:

Կ'արժէ յիշել նաեւ, որ Սիւրբէն ձայն մը Պօղոս Մնակեանը, ստալինեան գոհերուն բազմիցս անդրադառնալէ ետք խորհրդային ժամանակաշրջանին, 1996ին «Բագին»-ի մէջ գրած իր մէկ նշմարը կ'եզրուփակէր հետեւեալ տողերով. -

«Ինքն էր, հոս բոլորովին անձանօթ, հոն՝ վերապահութեամբ յիշատակուող Հրաչեայ Քոչարը, որ Նայիրի Չարեանի, Արտաշէս Ոսկերիչեանի եւ աղաւաղուած մէկ-երկու ուրիշ խառնուածքներու հետ հայ գրականութեան դաշիններուց եւ ունեւոր հրահրող սանձագրած գործունեւոր մէկը եղաւ ամբողջ քաղաքում մը, 1936էն մինչեւ 1956»⁴:

«Ժամանակն էր մեղաւոր»-ի դիրքերէն մեկնող, այժմ հանգուցեալ Սիւրբ Կապուտիկեանը, տարբեր կարծիք մը արտայայտած էր իր կեանքին վերջալոյսին. -

«Ընդունուած է ասել՝ փաստերը անողոք են... Սակայն փաստերը անողոք են նաեւ աշն պատմաբանը, որ երբեմն ծածկում են խորքային մը մարտութիւնը: Իսկ նշմարութիւնը հետեւեալն է: Պահը եղել է ուղղակի մզնաժամային: Գրողների Միութեան այդ օրերի դեկավարները Չարեանին, Քոչարին, նրանց ընկերներին հեռացրել էին կուսակցութիւնից, սպասում էր մօտալուտ բանադրութիւն: Միակ ելքն

էր՝ հեռացրել Մոսկուա եւ իրենց նացիոնալիզմի մէջ մեղադրողներին մեղադրել նոյն այդ նացիոնալիզմի եւ ժողովրդի քշումիներին հովանաւորելու մէջ... Միակ ելքը՝ գրապարտել գրապարտիչներին: Դա ժամ, ահաւոր ժամանակներ...»⁵:

Իր յուշագրութեան մէջ, Ս. Կապուտիկեան խոստովանած է, որ ինք 1933-1938ի դէպքերուն մասին միայն մամուլէն ու մարդոց պատմածներէն գիտէ: Այդպէս ըլլալով հանդերձ, «ճշմարտութիւնը» շարադրելու իր փորձը բաւակալեցին մակերեսային է: Այո, յայտնի է, որ Ն. Չարեանի «մաքրագործուելու» կարգը եկած էր: Բայց տրեւ... 1938ին էր, երբ Չարեանն ու միւսները այլեւ բանտը մեռած, գնդակահարուած կամ Սիւրբերոյ ճամբան բռնած էին: Իսկ մամուլի ու արխիւներու ցարդ հրատարակուած վկայութիւնները բաւական կ'երեւէին անուստին այդ ժամանակներուն զաղափարական ահաբեկչութեան մեղսակիցները նրկատելու համար Չարեանն ու Քոչարը:

Ս. Կապուտիկեան անբարդարձած է այն իրողութեան, որ Գրողներու Միութեան մուտքին, պատերու վրայ փակցուած յուսանկարներու շարքէն կը պակսին Ն. Չարեանն ու Քոչարը: Առաջինին «չուրջը չարամբտորէն խտացրած սեւը», կը գրէ ան, «իր ծիրի մէջ առաւ Ն. Չարեանի այդ տարիների մտերիմ ընկերոջը՝ Հրաչեայ Քոչարին»⁶: Բայց մեզի կը թուի թէ սեւը «զրպարտութիւն» չէր, հակառակ բանաստեղծուհիին պնդումներուն:

Պատմութեան ուրիշ հեղինակներով, այս երկու դէմքերուն անունով կը կոչուին այսօր դիրար շարունակող երեւանեան երկու փողոցներ: Գետնուղիի (մեթրոյի) վերջին կայարանի՝ «Բարեկամութիւն»էն սկսող Հրաչեայ Քոչար փողոցը, որուն սկզբնական բաժնին մէջ կը գտնուի ոչ այլ ինչ (երրորդ հեղինակը), քան Հայաստանի Պատմութեան Արխիւ-

ներուն գլխաւոր շէնքը, կը շարունակուի Նայիրի Չարեան փողոցով: Եղիշէ Չարեանը, Ակսել Բակունցը, Գուրգէն Մահարին, Վահան Թոթովեցը կամ Չապէլ Եսայեանը նոյնպէս զիրենք յիշող փողոցներունն են, որոնցմէ միայն առաջինը, որքան գիտենք, քաղաքին կեդրոնը: Ամէն պարագայի, չհարցնեմք թէ ամէն մէկուն անունը կրող փողոցը ո՞ր կը գտնուի՝ քաղաքի աչքառու տեղ մը, թէ կորսուած թաղամասի մը ծայրը:

Իր յօդուածը կանխող աւելի կարճ գրութեան մը մէջ («Ամբողջ ձայնով...»), Գ. Աճէմեան հարց կու տար...

«Որքանով բարոյական է միեւնոյն քաղաքում ունեւոր գոհերի եւ դաշինների անուններով փողոցներ...»⁷:

Որքանով: Ճիշդ չափը կարելի չէ որոշել: Բայց եթէ ստալինեան բռնարարներուն «արժանացած» երեւանդ Քոչարը փողոց մը չունենար իր կառուցած վարդան Մամիկոնեանի արձանին կողմերը, պիտի առաջարկէինք, որ այդ նոյն օրերուն պատահապաշտ հաւատաքննիչի դիմեմ ճակատագրով միացած ու ապա փողոցով անմահացած Ն. Չարեան - Հ. Քոչար զոյգը իր տեղը զիջէր հայաստանեան զաղափարական սեղմումներուն ենթարկուած, 1960ական թուականներուն իրենց մտաւորական անկախութիւնը Երեւանի սրճարաններուն մէջ պահպանած վաղեմի բարեկամներուն՝ Կոստան Չարեանին ու Երուսաղէմ Քոչարին: Փողոցներուն անունները պիտի փոխուէին՝ առանց փոխուելու...

(Այսքանը՝ յուշելու համար, որ Երեւանի մէջ թաղուած Կ. Չարեանը իր մահէն 25 տարի ետք զպրոցի մը անունին արժանացաւ, բայց ո՛չ փողոցի մը):

Կ'արժէ հարցնել նաեւ, թէ որքանով բարոյական է, որ 16 տարիներէ ի վեր անկախ Հայաստանին մէջ, ուր Շառլ Ազնաւուրին նըւիրուած արձան մը անգամ կանգնեցաւ (Գիւմրի), իսկ այս տարի Ուելիւր Մարտիանի նուիրուած արձան մը պիտի կանգնի, տակաւին 1937ի գոհերուն նուիրուած յուշարար մը իսկ կառուցուած չըլլայ իրենց կառափնարանը հանդիսացած մայրաքաղաքին մէջ:

Հարցումը բաց է հայրենի ներկայ ու գալիք սերունդներուն համար. -

Ո՞վ տէր պիտի կանգնի 1937ին...:

Վ. Մ. Կիւ ձըրգի

կազմութիւն ունի, - հարցրեց:

- Հարթ տափաստան է, - պատասխանեցին նրանք:

- Տեսնո՞ւմ ես, - դարձաւ Աստուած պաշտպանին, - Ռուսաստանը ոչ թէ սար, այլ մի պոպոք կտորելու քար անգամ չունի եւ, սակայն, աշխարհի ամենադաժան աստուածներն է տուել, յանձնիս Լենինի եւ Ստալինի: Վերջիններս համեմատել կարելի է միայն Մողոքի հետ. նա այրում էր գոհերին իր շիկացած գրկով, իսկ սրանք անչնացրելով էին Սիւրբի ստանամանիքներում:

Պրոցէսի վերջում զանազան աստուածներ գատապարտուեցին տարբեր ժամանակներով շոյութեան: Իսկ Լենինին ու Ստալինին՝ Աստուած յանձնեց Գարբիէլ հրեշտակապե-

տին, որ տանի երկրորդ անգամ մեռցնի:

Դատարանից դուրս գալիս, Լենինը դարձաւ Ստալինին.

- Մենք այնպիսի մի աւանակ երկրում ենք ծնուել, որ ինչքան շատ մեռցնեն մեզ, այնքան աւելի ուժգին կը պաշտուենք...

Կրօնները, ուր պաշտուում են անհասարակները, դոյութիւն չունեցող աստուածները՝ դա արուեստ է արդէն, եւ տեղի է ունենում իսկական կոմէդիա:

Իսկ Լենինի, Ստալինի նման կերպով - իմած աստուածների առկայութեամբ կոմէդիան Փարսի է վերածւում:

1957թ.

- 1) Այս տողերը կարդացած ենք ատենին, Եւսէյն մէջբերումը յիշողութեամբ կ'ընենք, քանի որ աղբիւրը չենք կրցած գտնել:
- 2) Նոր Կեանք (Լոս Անճըլես), 2008 Յունուար 10:
- 3) Ազգ - Մշակոյթ, 2008 Յունուար 12:
- 4) Պօղոս Մնակեան, Կրկէսին մէջ, հատոր երրորդ, Երեւան, 2005, էջ 70:
- 5) Սիւրբ Կապուտիկեան, «Հրաչեայ Քոչարը եւ իր ժամանակը», Գրականագիտական Հանդէս, Ա., 2005, էջ 215:
- 6) Անդ, էջ 193:
- 7) Ազգ - Մշակոյթ, 2007 Նոյեմբեր 3:

«Ի՞նչ է Ձեր ՆՊԱՏԱԿ...»¹

ՈՒՒԼԻԸՄ ՍԱՐՈՑԵԱՆ ԵՒ ՇԱՐԺԱՐՈՒԵՍԸ

ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Երբեք չեմ հետաքրքրուել բացայայտ երեւոյթներով կամ այն մանրամասով, որ ընդունելի է յօժարութեամբ:
ՈՒՒԼԻԸՄ ՍԱՐՈՑԵԱՆ

Հոլիվուտը միշտ հետաքրքրուել է ժամանակին, շուկայ գտած հեղինակների տաղանդով: Բնականաբար Ուիլյամ Սարոյեանը, իր ձօնաձողի վրայ սաւառնող խիզախ պատանին՝ հատորի վայելած շողջողուն յաջողութեան բերումով, չէր կարող անտեսուել եւ շուտով՝ 1936-ին, հրաւիրուեց շարժարուեստի մայրաքաղաքը: Երիտասարդ գրողը, ամենայն հպարտութեամբ, արդէն յիշուած հատորի յառաջաբանում բացայայտել էր իր գրելակերպն ու ստեղծագործութեան ընթացքը: Համարձակօրէն նշել էր թէ գրող դառնալու համար, միշտ անտեսել էր ընդունուած գրական կաղապարները, երիտասարդ տարիքից սովորութիւն էր դարձրել արագօրէն մեքենագրելը, եւ ամենակարեւորը՝ քանի որ շուտով մահն էր վրայ հասնելու, գիտակցել էր թէ կեանքը լիազօր գրագործութեամբ պիտի ապրուի:

Հաստատուած միայնով իր անձին, խուսափելով միւս գրողների ոճով գրելուց, մէկ կողմ դնելով անմեղ բառերին բարեացակամօրէն սպաննող ածականները, Սարոյեանը, որ գրել էր միմիայն իր անձնական բարարութեան համար, հաստատ էր թէ շարժարուեստի մայրաքաղաքում եւս, իր բախտն ու շնորհքը պարտադրել պիտի կարողանայ: Սակայն եղաւ հակառակը: Հոլիվուտը, իր հաստատ սահմանումներով, ոչ մի կերպ չհամակերպուեց նրա ստեղծագործական ազատ, աննախատեսուած ընթացքին: Իր տարիներին յարմար միջավայր չգտնելով, հեղինակը շուտով հեռացաւ:

Աստղերի ներկայութիւնը Հոլիվուտեան արտադրութիւնների հիմքն էր: Սարոյեան երեսնական թրւերի վերջում եւ քառասնականի սուղին տարիներում, համարում էր ամերիկեան պատմուածքի ու թատերական արդի գրականութեան նոր աստղը: Հոլիվուտ գիտակից էր դրան: Մեծապէս շուկայ գտած նրա նոր պատմուածքներն ու բեմական խաղերը, Հոլիվուտի հսկաներին կրկին մտածել տուեցին ու 1941ին, Սարոյեանը բարձր աշխատավարձով, Մեթրօ-Կոլտուրի Մարձէր հիմնարկի կողմից, նորէն շարժարուեստի մայրաքաղաքը հրաւիրուեց: Նա, որ իր կեանքը մեծ համոզմունքով բախտախաղի օրէնքների հիման վրայ էր տնօրինում, այժմ բախտն ու ժամանակը շարժարուեստի մարզում պիտի փորձարկէր:

Երիտասարդ ու խիզախ գրողը, իր իւրայատուկ աշխարհը տեսնելի դարձնելու համար, 1939ին, Քո Կեանքի ժամանակը խաղի բեմադրութեան օրերին արդէն, փորձել էր իր բեմադրել, իրեն Պրոտէկտի արտադրիչներին պարտադրել եւ մասամբ յաջողել է: Այժմ, յատկապէս Ֆիլմի համար շարժարուեստ պատմուածքի նոր շարան՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ, իրագործելու համար, առանց նկատի առնելու շարժարուեստի տեսիլական պահանջները, նա ինքն իրեն միակ իրաւասու անձը յայտարարեց:

Հեղինակային շարժարուեստին յարմար ստեղծագործական միջոցներն ու հիմունքները միայն յետ պատերազմական տարիներին միջազգային արտադրիչներին պարտադրուեց: Հոլիվուտում գրողը դեռ նախ գրող էր, բեմադրել՝ փորձառութեան ճամբով ունակութիւն հաստատած անձ: Սարոյեան իր կարողութիւնը հաստատելու ու արտադրիչներին համոզելու, բաւարարելու համար, անտարակոյս բրնձուքիւն պիտի անցկացնէր: Համեստ միջոցներով՝ գրամեքենայի օգնութեամբ, հասարակ թղթի վրայ անձնական մտայնացքին ընթացք տուող հեղինակը, այժմ պիտի արտայայտուէր թանկարժէք ժապաւէնի ու նկարահանման խցիկի միջոցով:

ՄԻ ՔԱՆԻ ԶՔԱՒՈՐՆԵՐ

Սարոյեան ֆնուրիւն անցկացնելու համար, անմիջապէս աշխատանքի անցաւ: Ընտրեց արդէն հրատարակուած իր Մի Քանի ԶՔաւորներ վատմուածքը: Դերակատարների ընտրութեան պահերին, ներշնչուած ոմանց ունակութիւնից, պատուով մէջ մի քանի յաւելեալ տիպարներ ներառեց: Ի միջի այլոց ընդգրկեց մի Հայի, որին անուանեց՝ աշխարհի բանաստեղծը: Նա, Գալիֆորնիայում նպարտվածուից Զմիւռնիայի թուղ գնելիս, պիտի հայերէն խօսէր, ինքն իրեն համբէր ու ասէր՝ իսկապէս քաղցր եմ: Երկար ժամանակ կ'ուտեմ: Այդ պիտով, առաջին անգամ լինելով, Հոլիվուտում նկարահանուած մի Ֆիլմի մէջ, Սարոյեան պիտի յաջողէր հնչեցնել հայերէնը: Հեղինակը՝ կարճամետրաժ ֆնուրիւնը

վերնագրեց ԼԱՒ ԳՈՐԾ: Շարժարուեստի մարզում, դա եղաւ նրա առաջին ու վերջին իրագործումը: Արտադրիչները՝ յատկապէս Լուիս Բ. Մայէրը, արդէնքը ձայնող գործ համարեցին ու ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ Ֆիլմի վերածելը, հեղինակին չվստահուեց:

Հեղինակային իրաւունքները արդէն 60-000 տոլարով գնած լինելով, Մայէրը Սարոյեանի պատուով յանձնեց գրող - ցենարիստ Հոուարտ Էսթայրուքին՝ եւ բեմադրի Բարթէն Պրատին: Սարոյեանը որոշեց ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ 80-000 տոլարով յետ գնել: Մայէրը մերժեց ու փոխարէնը՝ 15-000 տոլարով, ԼԱՒ ԳՈՐԾ-ը նրան վաճառել ուզեց: Հեղինակը չհամաձայնուեց: Այդուհետ, Հոլիվուտի հսկաների ու Սարոյեանի միջեւ ծայր առաւ Գողիարթի ու Դաւթի պայքարը յիշեցնող մի իրավիճակ: Դա շարունակուեց երկար տարիներ: Այն թէ՛ շարժարուեստի եւ թէ՛ թատերական բեմադրութիւնների մարզում, մեծապէս խանգարեց ու խաթարեց Սարոյեանին: Իր Հոլիվուտեան փորձառութեան մասին, նա եօթնասունական թուերին, այսպէս արտայայտուեց: Շարժարուեստը կարող էր ինձ համար մեծապէս յարմար լինի: Բայց ես կարողացայ ցանկացած անի: Զկարողացայ անել այն ինչ ինձ էր անհրաժեշտ, ստիպուած արի այն, ինչ պահանջում էին, եւ դրա համար ես անկարող էի: Ֆիլմի արհեստը դրամատիկորէն, խար

պիտի յաջողի, այն այդպիսի՝ կատարեալ նուիրումով պիտի իրագործուի⁵:

Պրատին նշումները էլ աւելի են հաստատում ու հիմնաւորում Սարոյեանի արդար բողոքն ու դայրոյթը: Արտադրիչները պարտադրանքով իրագործուած Ֆիլմը, բեմադրելը միայն իրեն սրտից բխածին է վերագրում ու բուն հեղինակի նուիրումը չեղեալ է դատում: 1943-ին Սարոյեանի նիւթը, իր բեմադրական ֆիլմի համար գրուած տարւայ լուսագոյն իւրօրինակ պատում, պարզեցարուեց Օսքար մրցանակով: Քանի որ ըստ արտադրիչների ֆիլմի ցենարիստը յայտարարուած էր Հոուարտ Էսթայրուքը, Սարոյեանը անմիջապէս, ի պատասխան կատարուածին, իր բուն գրութիւնը հրատարակեց իր բեմադրիչը: Մինչ օրս ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ համարում ու մնում է հեղինակի ամենասիրուած ու տարածուած երկը:

Վիպակը վերնութեցելիս, պիտի նկատենք, հակառակ Պրատին պընդումներին, կրճատումներից զատ, նիւթը արտադրիչների միջամտութեամբ բազմիցս է խեղաթիւրուել եւ միանգամայն տարբեր շնորհ է նկարահանուել: Համաշխարհային երկրորդ պատերազմի օրերին շուկայ հանուած ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Ֆիլմը, բացուած ու փակուած է Սարոյեանի պատումի ոճին միանգամայն անյարիր շեշտ կրող յաւելեալ բաժիններով: Դրանք կրում են Թորնթոն Ուայլ

Գրեց՝ ԱՐԲԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

դախներով, սրիկաներով, խարբաներով եւ դեռ աւելի գէշերով լեցուն էր, եւ դեռ է:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Ֆիլմի բեմադրի Բարթէն Պրատինը, կեանքի վերջին տարիներում շարժարուեստի պատմաբանների մօտ, այսպէս արտայայտուեց. «Սկզբում նախատեսուած էր, որ Ուիլյամ Սարոյեանն է իրագործելու Ֆիլմը: Լուիսը (Մայէրը) հիացած էր նիւթով եւ պատումը գնելու նախատեսելով նաեւ, որ Սարոյեանը ինքը պիտի դեկավարի Ֆիլմը: Ուրեմն, որպէսզի նա սովորի թէ ինչպէս պիտի նկարահանման խցիկից օգտուի, տեխնիկական փորձառութեան համար, նրան մի կարճամետրաժ ֆիլմի նկարահանումը յանձնեցին. արդիւնքը մի խայտառակ, խայտառակ խառնաշփոթ բան էր: Նա միայն մատիտով էր կարող պատմութիւն պատմել: Յետոյ ծրագիրը յանձնեցին ինձ: Սարոյեանի ցենարը չափազանց երկար էր՝ 250 էջ: Պատումը կորիզ ունէր, բայց նա չգիտէր երբ միտքը հասկացուեց, երբ նկարը պիտի կողի ու միւսին անցնի: Էսթայրուքի (Հոուարտ) ու իմ արածը, խմբագրութիւն էր: Մեծ ու չինչ չյաւելացրիմք, ոչինչ չփոխեցինք: Միայն ցենարը կրճատեցինք, հասցրինք 115 էջի: /.../ Այն (ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ), ամենասիրած գործն է: Գիտէ՛ք, ամէն մի տեսարանը սքրպիցս է բխել: Եթէ երբեւէ մի ֆիլմ

տրբի՝ Մեր Քաղաքը՝ թատերախաղի եւ 1940ին Հոլիվուտում նկարահանուած, համանուն ֆիլմի ազդեցութիւնը: Դա մեծապէս խանգարում ու խեղաթիւրում է Սարոյեանի անարատ աշխարհահայեացքը:

Կարձ՝ Սարոյեանի գրական գունեղ, զուարթ ու զգայուն ընթացքը, ոճի առումով, Ֆիլմի մէջ իրեն յարմար շարժարուեստի լեզուն ու հոսքը չի գտել: Նիւթի հիմնական գործող անձի՝ Հոմերի, հանգուցեալ զօր մասին պատմելիս, բեմադրելը դիմել է երաժշտութեամբ ընդգրծուող յուզական ընթացքի եւ խօսելակերպի: Լոկ զգացական երբ շօշափող երաժշտութեամբ զուգակըցուած բաժինները, Ֆիլմի վայելած լայն տարածումն ու գոտած յաջողութիւնը, անհիմն կերպով Սարոյեանին դերագրելու հեղինակի պիտակով սահմանափակեցին: Մի բան, որ գալիք տարիներում, ընթացողների մօտ պղտորեց նրա անարատ ոճի ընկալումը:

Ք. Պրատինի ֆիլմում, մասամբ յաջող են միայն մանուկների բաժինները, ուր երբեմնակի փոխանցում է հեղինակի միտումը եւ գործի ընթացքը Սարոյեանական շունչ ունի: Օրինակ՝ դերասան Միքի Ռոնիի շարունակական նկարահանութեամբ դիտուած պատկերը, երբ Հոմերի դերում, ընթացում է երբոր նամակը: Այդտեղ գիտողին առիթ է տրուում, առանց յաւելեալ միջամտութիւնների, ընկալել բովանդակութեան արթուն ու ըզ

ԿԵԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՈՒ ՕՐԵՐ ԵՒ ՓԱԽՈՒՍՏ ԴԵՊՈՒ ԼՈՒՍԻՆ (*)

ՌԻԻԼԻԸՄ ՍԱՐԳՅԱՆ

ՕԳՈՍՏՈՍ 18 (1967)

ՔՈ ԿԵԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հողի վուտում իրագործում, հեղինակի երկրորդ երկարամետրաժն է: Մարոյեանը միշտ շեշտել է, թե իր գործերը երաժշտական կառույց ունեն ու նրանց ընթացքը կարող է բանել նմանակի զգացողություններ: Նրա երկերի թարգմանություններում, բեմադրություններում ու շարժարվեստի տարբերակներում, միշտ անտեսուել ու բացակայ է հենց այդ իւրայատկությունը: Դրա բերումով նկարահանումը պատումները թերի ու գուրկ են գործի ներգործական լիցքից: Այս ֆիլմում եւս, նիւթը բանում է, երբ գրական խօսքի հոսքն է լսում: Այսպէս՝ ֆիլմը մակերեսայինորէն դիտուած, խիստ կրճատուած, դիպուածների խտացումն է շարան է: Մարոյեանի հիանալի գունեղ հնարքը՝ տիպարներին տարբեր արտայայտչամիջոցներով, օրինակ պարի միջոցով խօսեցնելը՝ բեմադրիչ Հ. Ս. Փորթրիի նկարահանման խցիկի անճարակ օգտագործումով, եւ հեղինակի ոճին անյարիր հայեցակէտով, հասարակ ու միջանկեալ երեւոյթի է վերածուել եւ տիպարների երթ եւ եկն ու ապրածը խիստ պարզունակ է դարձել:

Այժմ, Ռենէ Մակըրթըն ալ մահացաւ, ախորժավայել, երեւակայութիւն նկարներուն պիտիայի հեղինակը: Մահը մահ է, անշուշտ, սակայն ամէնէն տպաւորիչ մահը, որուն աւանատես եղած եմ, Գալիֆորնիոյ ծովափին էր Մալիպու փողոցին թիւ 24848ին վրայ, տասնչորս տարի առաջ: Զրագուաւ մը մահն էր: Փոքր թուշուր ծովը թողուց մը թընչաղին, դժուարաբայլ անցաւ ծովափին խոնաւ աւազին ընդմէջէն, բարձրացաւ տասը ոտք, մինչեւ հողէ քարափին ծանծաղ խորը, երես դարձուց ծովուն, արեւուն, եւ բոլոր միւս ապրող էակներուն կեանքին, եւ այնտեղ կանդնեցաւ, սպասման մէջ: Հսկեցի եւ յետոյ հեռացայ քարեր հաւաքելով: Երբ վերադարձայ ժամ մը ետք, արեւը անհետացեր էր եւ Զրագուաւ քաշուած էր ժայռին փոքր խորշին աւելի խորը: Մօտակայ ծովափին վրայ տասնեակ մը կամ աւելի ուրիշ Զրագուաներ տարած էին կեանքով: Անոնք անտես-

ցին մեռնող թուշուր: Եւ այնպէս թուեցաւ որ թուշուրն ալ նախընտրեց անտեսուել: Մահը անձնական էր, ոչ ոք եւ ոչինչ կրնար գայն կանգնեցնել: Այդ գիշերը Զրագուաւն մասին մտածեցի եւ առաւօտուն կը սպասէի զինք մեռած տեսնել, սակայն տակաւին ոտքի էր, կքած՝ ժայռին խորշին ներքին եզրին աւելի մօտեցած: Ուշ կէսօրէ վերջին, դեռ կրնակը դարձուցած էր աշխարհին, սակայն, տակաւին՝ կենդանի: Արդ, մահը կրնայ դանդաղօրէն գալ որեւէ ապրող էակի: Թուշուրը ընտրած էր խորը իր սպաստարան, ուր կը սպասէր մահուան, սեղուններու ճամբայէն հեռու մնալու համար, նոյնպէս անոնց աչքերէն՝ ծովափի մարդոցմէ: Եուները մինչեւ մահ նեղացուցած պիտի ըլլային թուշուրը, իսկ մարդիկ պիտի ուզէին վերակենդանացնել զինք, օգնութեան սարսափազու միջոցով գայն սպաննելով, այնինչ որ ամերիկեան բժշկական մարմինը ինքզինք պարտաւոր կը պալ

մարդ արարածներուն հանդէպ գործադրելու: Իրիկունը, տունիս ցածը, կանգնած՝ կը դիտէր մակընթացութեան դազաթնակէտին հասած ծովը, երբ վերջիչեցի թուշուրը եւ քալեցի մի քանի հարիւր մեթր, մինչեւ անոր ապաստան գտած վայրը: Այժմ, մահացած էր, վերջապէս, ինկած ինք իր վրայ, խորշին մէջ, բոլորովին անբան, իր վեհութիւնն ու ճշմարտութիւնը անեղծ պահած: Մարդոց պարագան տարբեր է: Կարգացած եմ մահերու մասին որոնք որոշակի վեհութիւն ունեցած են, սակայն, միշտ ալ ունէ մարդու մահուան պարագային սխալ բան մը կայ, որովհետեւ մարդը այն արարածն է որ բնաւ չէ խոնարհած մահուան: Ան հնարեց Աստուածը, երկինքը, յաւերժական կեանքը, վերամարմնաւորումն ու շատ ուրիշ մահուան վտարումներ: Բայց թերեւս ան բնաւ չհնարեց այս բոլորը: Իրապէս, պիտի չուզէի գիտնալ: Մարդը կրնայ ճշմարտութիւնը, Զրագուաւ՝ սխալած: Թերեւս, Զրագուաւ, ներկայիս, վերջին հաշուով, կը կերակրուի երկինքին մակընթացութեան մէջ:

Թարգմանեց՝ ԺԻՐԱՅՐ ՉՈՒԱՔԵԱՆ

* Days of Life and Death and Escape to the Moon (The Dia Press; N.Y. 1970) Յուշագրութիւն:

ՀԵ՛Յ, Ո՞Վ ԿԱՅ...

Արտայայտչապաշտ ոճով, շեղակի տեղադրուած բանաձողերի մէջ առնուած, լոյսի եւ ստուերի զօրեղ շեշտ կրող մի միջավայրում, ձէյմս Ուէյլը՝ 1949ին նկարահանած ՀԵ՛Յ, Ո՞Վ ԿԱՅ-ն, մինչեւ 1967ը, երբ նրա մասին մի նոր յիշատակում տպագրուեց¹⁰, միանգամայն մոռացւած ֆիլմ էր: Այն իրագործուել է համանուն, ամէնուր բազմիցս բեմ հանուած, մէկ արար խաղի հիման վրայ, որի նկատմամբ Մարոյեանը մեծ համարում չունենալով, դրա հեղինակային իրաւունքը 9-000 տոլարով վաճառել էր բախտախաղից յառաջացած իր պարտքը վճարելու համար: Հողի վուտում դա նրա վերջին գործն էր:

Մոսկուա հիմնուած, շարժարվեստի բարձրագոյն դպրոցը, որ միջազգայնօրէն այդ մարզի ամենաառաջնակարգ կառույցն էր համարուում, իր ուսանողներին թոյլատրում էր աւարտական ֆիլմերի համար, միջազգային գրականութիւնից քաղուած նիւթերի օգտագործումը: Եթէ ֆիլմի ստեղծողները գիտեն թէ ինչ նպատակի են հետամուտ, ապա նրանց առաւելութիւններն ակնայայտ են: Նպատակի գիտակցումը օգնում է նրանց իրենց ասելիքը գեղարուեստական առաւել լաւ միջոցներով արտայայտելու¹¹: Սառն Պատերազմի օրերում, այսպէս էր թարգմանուել, Մարոյեանի հակա-Հողի վուտեան մէկ գրությունը: Ժողովուրդների համեմատ խաւերի հեղինակ պիտակով թարգմանուած ու տարածուած Մարոյեանը, Սով. Միութեան մէջ ապառնով գրող էր: Երկու ուսանողների, մէկը Մոսկուայից Անդրէյ Սմիլնով¹², միւրը Բաբուխի՝ Ռորիս Եաչին¹³, 1963ին արտօնուեցին իրագործելու նրա գրուած քիչ քաղուած ստալին սովետական ֆիլմը՝ ՀԵ՛Յ, Ո՞Վ ԿԱՅ...: Սա երկրորդ անգամն էր, որ խաղը նկարահանուում էր:

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Վաթսունական թուերին, Մարոյեանը մտադրուեց շարժարվեստի մարզում գործակցել սովետական Հայաստանի հետ: Փորձը սպարդիւն անցաւ ու նա չուտով

եզրակացրեց. Ոչ ոք չկարողացաւ մի բան անել: Այնտեղ նոյնպէս, վարչական արգելքներ կան, նրանց համակարգը նոյնպէս նեղիչ է: Նրա ոճը, ժամանակին Հայաստանի շարժարվեստում, իր արձագանքը գրուում Հենրիկ Մալեանի Եռանկիւնի (1967) ֆիլմում: Մի բեմադրիչի աշխատանքում, որի արտայայտչաձեւը, գերութեամբ, առանց չափազանցութեան ունակ էր Մարոյեանական պատումի երանգները շօշափել: Միւս տասնամեակում, արհամարհելով հեղինակի ցանկութիւնը, Երեւանում երիտասարդ մի նոր սերունդ, նկարահանեց ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է եւ ՀԵ՛Յ, Ո՞Վ ԿԱՅ ԱՅՆՏԵՂ ֆիլմերը: Վերջինս երրորդ անգամն էր որ ֆիլմի էր վերածուում:


Հայաստանի ֆիլմաշխատողների ու մի քանի անուանի գերասանների մասնակցութեամբ, Իմ Սիրտը Լեղ-

ներում է թատերախաղի եւ Սպիտակ Ձիու Ամառը պատմուածքի շարգախով, առանց հեղինակի համաձայնութեան, անազնօրէն նկարահանուած ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ է-ն, այնպիսի ոճով իրագործուած, վատորակ ֆիլմ է: Այն այսօր գտնուում է Երեւանի շուկայում, ուսուերէն տարբերակով: Ժամանակին Մարոյեանը, իր իրաւունքը պահանջելու նպատակով, մի եռամսկ ուղղեց Սփիւռքահայաստանի հետ կապի կոմիտէի նախագահ՝ Վարդգէս Համազասպեանին. Պետք է ասեմ, որ ժընեի կոմիտէից հայ մասնակից երկիրները նախքան որեւէ հեղինակի գործը շարժանկարի վերածելը, պետք է թոյլտուութիւն քուտանան հեղինակից: Ասեմ ինչի համար: «Իմ սիրտը յեռներում է» պիտի ունենար, դիրքիկտորը, դերակատարները կարող են չհամապատասխանել այդ պիտի պոտէ-

ցիակին, քանի որ դրանց ոչ միջոցներու իւրը կը վնասի պիտի, հեղինակին եւ որ ամենակարեւորն է՝ հայ հանդիսատեսին: /.../ Այս ամէնը մեծ հոգս կարող է բուսաւ սակայն պիտի ասեմ, որ գրեթէ նոյնպէս հոգս է: Եւ այն, ինչ ես եմ գրում, իմ երկար տարիների դժուարին աշխատանքի արդիւնքն է, եւ ես ուզում եմ, որ բոլոր ժողովուրդները և մասնաւորապէս հայ ժողովուրդը, որ մարդկային ցեղի գուտ ազնուական շերտն է կազմում, իմ գործը կարգայ այնպէս, ինչպէս ես եմ գրել՝ չաղաարդուած, չփոփոխուած, պարզ ու շիտակ (20 Ապրիլ, 1976, Փարիզ)¹⁴:

Հայաստանում Մարոյեանի պատմուածքներից, յետ մահու, իրագործուել է վեց կարճամետրաժ Երկուսը խաղարկային, երեքը

(Շար.ը Դ. Էջ)



Պատկերացրել էր Հիլըֆելդը (1976)

Ի՞նչ ՊէՏՔ է ԽԱՂԱՆՔ

ԽԱՂԱՅԱՆԿԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՄԸ ՀԱՄԱՐ

ՈՒՆԻԿԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

Ի՞ՆՉՊԵՍ 300 ՏՈՒՆՐՈՎ ՇԱՐԺԱՆԿԱՐ ՄԸ ՊԱՏՐԱՍՏԵԼ (1)

Ազգային Թատրոնը կը սպասէ անելի խաղալու ու բարեկամատ օրերու գործնապէս կեանքի կոչուելու համար: Եւ քանի որ անելի բան քան ինչ որ շաղախը, խաղացանկն է հիմնաքարը որովք ազգային Թատրոնի, ԹԱՏՐՈՒԱԿԱՆ ԱՐՈՒՆԵՍՆԵՐԸ՝ յարմար գտաւ, իր ֆանսիֆոնը՝ յարմար գտաւ, իր ֆանսիֆոնը յարմար գտաւ, իր ֆանսիֆոնը յարմար գտաւ, իր ֆանսիֆոնը յարմար գտաւ:

այն արուեստալի ու իրական ա՛կունքներէն, որոնք ինծի կը թուին թէ կարելի ունին անյապազ առանձնանալու եւ ներծծուելու ամերիկեան ցեղին կողմէն: Իմ մտադրութիւնս է, այստեղ, թեւազերի միայն մեթոտ մը եւ ծրագրել մը նախագիծը: Բնականաբար, շատ մը զանազաններ պիտի ըլլան:

- 1 — Խոսի տերեւներ¹⁴ - Մալիթ Ուելթման¹⁵-էն, պատշաճեցուած Վերտաուար Մորլէյ¹⁶-ի եւ Ուելթման Ռոզալէնթ¹⁷-ի կողմէ: Խաղին բոլոր դերակատարները անանուն պիտի ըլլան, ոչ պատում, ոչ նախագիծ, զուտ թատրոն: Բեմայարգարումը՝ զոյներ եւ լուսարձակուած պատկերներ, թերեւս Բորիս Արոնսոն¹⁸-ի ձեւաւորումով: Առանց ընդմիջումի: Մի քանի ժամ ուղիղ դիտում: Երաժշտութիւն՝ Փոլ Պոլլար¹⁹:
- 2 — Թում Սոյըր եւ Հաֆ Ֆիլմ²⁰, Մարք Թուէյն²¹-էն, պատշաճեցուած Գարլ Սանտպլերի²²-ի կողմէ: Պատմութիւն, բեմայարգարում, միջնարարներ, եւլն.:
- 3 — Շիքակո 1905-1925, ազատ խաղի վերածուած բոլոր այն մարդոց կողմէ ու անոնց համար որոնք Շիքակոն ստեղծեցին: Սանտպլերի, Բանաստեղծական հանդէս²³ եւ Հարրի Մոնրոէ²⁴, Վաշէլ Լինտսէյ²⁵, Էտկար Լի Մասթրըր²⁶, Պէն Հէյլ²⁷ և ուրիշներ:
- 4 — Տուրուամբոյ²⁸ կատակներ (դարասկզբի շարժանկարներէն), պատշաճեցուած Մաք Սէնթ²⁹-ի, Հալ Բօօ³⁰-ի, Հարրի Լանկտոն³¹-ի, Մնայ Փոլլար³²-ի եւ ուրիշներու կողմէ:
- 5 — Լրատուական ժապաւեններ³³, ընտրութիւններ առաջին շրջանի լրատուական տեսերիզներէն, նախագիտ ցուցադրուած պատմութիւն վրայ, յետագային աւելի լրիւ եւ արուեստով բեմին համար թատերականացած, ընտրուած, դասաւորուած եւ պատշաճեցուած՝ առաջին շրջանէն, այդ ճարտարութեան արուեստը անձերու կողմէ:
- 6 — Վոտըլի³⁴, 7 — Միծաղաշարժ խաղեր³⁵, 8 — Չուրճակի³⁶, 9 — Շարժարուեստասիրարանութիւն³⁷ (Movie love) (Ժամանակակից շարժարուեստի կենցաղային ազդեցութիւն):
- 10 — Մարգարադեր. պէյպոլ³⁸, Ֆոլթպոլ³⁹, ձիարշաւ⁴⁰, եւլն.:
- 11 — Չայնասիի⁴¹
- 12 — Շարժարուեստասիրարանութիւն⁴² (Movie love) (Ժամանակակից շարժարուեստի կենցաղային ազդեցութիւն):

Անկեղծ ըսեմ, ըլլալիք բան չէ: Երկարամետրաժ Ֆիլմի մը համար ժապաւենի մը գինը ինքնին, ըստ «The Consumers' Research»-ին եւ ըստ ընկերոջ մը որն անունը կը նախընտրեմ չըսել, 137,50 տոլար է: Կը մնայ 162,50 տոլար մասը մուշի ծախքերու համար, որոնք յաճախ ահապին դրամի կը կարօտին: Իմ գաղտնի հաշիւներուս համաձայն, շնորհով Ֆիլմ մը 347,50էն 395,50 տոլարի կը նստի: Յիսուս սենթ ալ յատկացուած է շտապ պէտքերու, ինչպէս պատկերահանման կրկնութիւններ, ծխախոտ, հեռագրիներ, կամ Ուելի Հէյլի³ աշխատակազմը կաշառելը, եթէ յանկարծ պատմութիւնը գոհնիկ է, կամ այդպէս բան մը: Ֆիլմ ըսելով՝ ըսել կ'ուզեմ գործ մը որ կրնայ ամբողջ աշխարհին ցուցադրուիլ, եւ որ կրնայ գրեթէ 1.257,643,50 տոլարի շահ բերել:

Մտածէ՛ ասոր մասին: Կ'արժէ՞ արդեօք Ֆիլմ չիւնել: Անշուշտ թէ կ'արժէ:

Ի՞նչ ունի որ դուն չունիս շարժանկարի սովորակաջ, արտադրիչ մը: Դրամ: Է՛հ, այո՛, բայց արդեօք քեզմէ աւելի երջանիկ է, կամ վերջապէս երկուքնէդ ո՞րը փորացաւ ունի: Արտադրիչը անշուշտ: Ինչո՞ւ: Որովհետեւ քեզմէ աւելի լաւ երեւակայութիւն ունի: Բնականաբար, առաջին ընելիքը երեւակայութիւնը մշակել է: Չես կրնար Աւեսարանէն պատմութիւններ գոյնալ առանց աշխոյժ երեւակայութեան մը: Ուրիշ ի՞նչ ունի որ դուն չունիս: Նկարագրի՛ր: Է՛հ, ձեւով մը, այո՛:

Ան կը կարծէ որ խելացի է: Դուն ալ կրնաս սորվիլ ինքզինքդ խելացի կարծել: Կրնաս նոյնիսկ սորվիլ ընկեր գտնել եւ մարդոց վրայ ազդեցութիւն ունենալ: Բարդ գործ մը չէ: Առաջին ընելիքը արթննալ է, եթէ կրնաս: Յետոյ ինքզինքդ համոզի՛ր որ ամբողջիս կամ գոնէ ակտիւները խոզանակես: Լուսացուէ՛, եթէ տաք ջուր կայ, եւ անկէ վերջ որեւէ բանի պատրաստ ես:

Պատրա՞ստ:

Լաւ, սկսի՛նք:

Շատ պարզ է, կ'ուզես քանի մը հարիւր տոլարով Ֆիլմ մը պատրաստել: Լաւ, խելքդ բանեցո՛ւր եւ ժպտի՛: Երբ միանկ ու տխուր ես, եւ բոլոր ընկերներդ քեզ լքած են, յիշէ՛ որ մէկը կայ որ քու մասիկը կը մտածէ. մայրդ: Նստի՛ եւ իրեն նամակ մը գրէ, եթէ իր հասցէն կրնաս յիշել: Դրամ մի՛ դրկեր: Չուզեր քու գրամը: Միայն գիտնալ կ'ուզէ թէ իր տղան լաւ է:

Շատ բարի: Եղա՞ւ:

Լաւ, սկսի՛նք:

Առաջին բանը որ պէտք է, ըստ Մեթրօ-Կոլտուեր-Մայէրին, պատմութիւն մըն է որ ունի սկիզբ մը, մէջտեղ մը եւ վերջ մը: Մի՛ մտա՛ հոգուիր սկիզբին, մէջտեղին եւ վերջին մասին: Աշխարհի վրայ չը կայ բան մը որ չունենայ սկիզբ մը, մէջտեղ մը եւ վերջ մը, նոյնիսկ գերասանուէի մը: Ոեւէ մէկը կրնայ պատմութիւն մը հնարել, եւ ոեւէ պատմութիւն կ'ունենայ սկիզբ մը, մէջտեղ մը եւ վերջ մը: Ա. արար, Բ. արար, Գ. արար: Իրիկուան դէմ, Երեքարթի, 1908: Յաջորդ առաւում: Նոյն օրը, կէսօրէն վերջ:

Ի՞նչ ունի որ դուն չունիս: Կը յիշե՞ս:

Պարզ թող ըլլայ: Քիչ մը սէր դիր մէջը, բայց պարզ թող ըլլայ: Հետեւեալ պատմութիւնը քեզի գաղափար մը կրնայ տալ:

Տեսարանը տեղի կ'ունենայ քաղաքէն դուրս: Երեսասարդ մը 12 տոլարնոց քոսթիւմ մը հագուած՝ կը քալէ դէպի արեւմուտք, ամայի ճամբու մը վրայ: Ասիկա սկիզբն է: Երկար կը քալէ: Երբեմն կը սուլէ, երբեմն ոտքը ձեռքը կը շարժէ, եւ տեսնը մէյ մը շտապաբար ըստ մը կ'ըսէ, որ Ֆիլմի ձայներիցն կը լսուի որպէս «Մէրի»: Ահաւասիկ սիրային երեսակը: Քալելէ երեք չի դադար, ինչ որ մէջտեղն է: Երբեմն օդը կը փոխուի: Ի վերջոյ հագուստները կը մաշին, մանաւանդ կոշիկները: Ասիկա վերջն է: Իր ստեղծուած՝ կոշիկին տակէն դուրս ցրցելէն ձեռք առալ, ահապէս ազմուկ կը լսուի Ֆիլմի ձայներիցն վրայ: Ասիկա գաղափարակէտն է: Կը ցուցադրուի խոչոր պատկերը իր ստեղծուած, յետոյ մէկէն իր աչքերուն: Այդ պահուն կ'անդրադառնանք որ կոյր է: Ամէն մարդ ինքզինքին հարց պիտի տայ թէ ինչպէ՞ս Նիւ Եորքէն դէպի այս ամայի ճամբան հասաւ, ինչ որ դիտողին հարցադրումն է:

Այս պատմութիւնը ամէնուր գրուիչ է եւ կրնայ շարժանկարի վերածուիլ մօտաւորապէս 379,50 տոլարի ծախքով: Եթէ աշխարհիս վրայ ոեւէ մէկը կատարեալ է, այս պատմութիւնն ալ է:

- Ցանկ մասնակցող անձերուն -
- Լորանս Օլիվիէ² - դերասան եւ բեմադիր
 - Էօթէն Օ'Նիլ³ - քատերագիր
 - Էլմըր Բայս⁴ - քատերագիր
 - Հարրիս Գլըբման⁵ - բեմադիր
 - Օրիոլ Լի⁶ - դերասան եւ բեմադիր
 - Թորնթոն Ուայտըր⁷ - քատերագիր
 - Ռիչըրտ Ուորթ⁸ - դերասան, բեմադիր
 - Ուելթման Սարոյեան⁹ - գրող եւ քատերագիր (տե՛ս իր գրութիւնը)
 - Ռաբէլ Գրոթըր¹⁰ - քատերագիր
 - Ուելթման Պրատի¹¹ - բեմադրութեան արտադրիչ
 - Արթուր Հոփքինզ¹² - քատերագիր եւ բեմադիր
 - Իրուին Շոու¹³ - գրող եւ քատերագիր

Անկեղծ ըսեմ, ըլլալիք բան չէ: Երկարամետրաժ Ֆիլմի մը համար ժապաւենի մը գինը ինքնին, ըստ «The Consumers' Research»-ին եւ ըստ ընկերոջ մը որն անունը կը նախընտրեմ չըսել, 137,50 տոլար է: Կը մնայ 162,50 տոլար մասը մուշի ծախքերու համար, որոնք յաճախ ահապին դրամի կը կարօտին: Իմ գաղտնի հաշիւներուս համաձայն, շնորհով Ֆիլմ մը 347,50էն 395,50 տոլարի կը նստի: Յիսուս սենթ ալ յատկացուած է շտապ պէտքերու, ինչպէս պատկերահանման կրկնութիւններ, ծխախոտ, հեռագրիներ, կամ Ուելի Հէյլի³ աշխատակազմը կաշառելը, եթէ յանկարծ պատմութիւնը գոհնիկ է, կամ այդպէս բան մը: Ֆիլմ ըսելով՝ ըսել կ'ուզեմ գործ մը որ կրնայ ամբողջ աշխարհին ցուցադրուիլ, եւ որ կրնայ գրեթէ 1.257,643,50 տոլարի շահ բերել:

Լաւ, սկսի՛նք:

Շատ պարզ է, կ'ուզես քանի մը հարիւր տոլարով Ֆիլմ մը պատրաստել: Լաւ, խելքդ բանեցո՛ւր եւ ժպտի՛: Երբ միանկ ու տխուր ես, եւ բոլոր ընկերներդ քեզ լքած են, յիշէ՛ որ մէկը կայ որ քու մասիկը կը մտածէ. մայրդ: Նստի՛ եւ իրեն նամակ մը գրէ, եթէ իր հասցէն կրնաս յիշել: Դրամ մի՛ դրկեր: Չուզեր քու գրամը: Միայն գիտնալ կ'ուզէ թէ իր տղան լաւ է:

Շատ բարի: Եղա՞ւ:

Վեանքի կոչուած որեւէ Ազգային Թատրոնի բացման եղանակին առիթով, պիտի նախընտրէի տեսնել կարգ մը խաղեր, որոնք տակաւին որոշակիօրէն թատերական խաղեր չեն: Անոնք, աւելի շատ, ամերիկեան թատերական զօրութեանակաւ նիւթեր են, եւ թերեւս, ներկայի, մեր թատրոնին հետ առընչուած մարդիկ, պէտք է առընչուած չըլլան շահագրգռուող համար որ այս խաղերը պիտի կազմեն սկիզբը խելական ամերիկեան բեմական արուեստին, անցեալին մէջ արմատ ունենալով, ներկային մէջ՝ ուղղութիւն մը, եւ յարատեւ կարողականութիւն մը՝ ապագային մէջ: Իմ խաղերս կ'ընտրեմ ամերիկեան կեանքին՝ ներքին ու արտաքին, նկարագիր եւ խմոր ունեցող

գործը. վերջին հաշուով՝ ըլլայ ա՛նանուն կամ ոչ: Եթէ այսպիսի թատրոն մը կեանքի կոչուի, պիտի ուզէի որ զիս իբր աշխատակից նկատի ունենայիք, մասնակցելու աշխատանքներէն մէկուն, զոր ուրախ պիտի ըլլայ ընտրելու յարմար պահուն, թերեւս խաղ մը ամերիկեան ազգային փոքրամասնութեան մը վերաբերող, հաւանաբար՝ Հայերու:

Թարգմ. Ժիրայր Զոլաֆեան

Լաւ, սկսի՛նք:

Շատ պարզ է, կ'ուզես քանի մը հարիւր տոլարով Ֆիլմ մը պատրաստել: Լաւ, խելքդ բանեցո՛ւր եւ ժպտի՛: Երբ միանկ ու տխուր ես, եւ բոլոր ընկերներդ քեզ լքած են, յիշէ՛ որ մէկը կայ որ քու մասիկը կը մտածէ. մայրդ: Նստի՛ եւ իրեն նամակ մը գրէ, եթէ իր հասցէն կրնաս յիշել: Դրամ մի՛ դրկեր: Չուզեր քու գրամը: Միայն գիտնալ կ'ուզէ թէ իր տղան լաւ է:

Շատ բարի: Եղա՞ւ:

(Շար. Բ. Էջէն)

գծանկարչական (շարժանկարչական) եւ մէկը տիկնիկային (տես՝ կցուած ֆիլմերի ցուցակը): Խաղարկային ֆիլմերը միաներին՝ գըծանկարչականին եւ տիկնիկայինին համեմատելիս, պիտի նկատենք, որ վերջիններս առաւել յաջող պատկերացումով են մտացել Սարոյեանի աշխարհին: Այդուհանդերձ գըրանք բոլորն էլ նկարահանուել են հեղինակին խորթ ցենարներով՝ հիման վրայ: Գծանկարչական առաջին ֆիլմը՝ ՆՈՒՆԵՆՆԵՐԸ, պատուհի ոճը խորամանկօրէն խեղաթիւրել է անյարիւր կերպով կուռնիկ երգին է կցել ու հայրենիքից դուրս գտնուող հողը, նունենիներէ համար, անապատ եւ չբեր յայտարարելով, բովանդակութիւնը ժամանակի քարոզչութեանն է յարմարեցրել: այն ինչ Սարոյեանը գրել է՝ ոչ մի խօսք չստացիմք, որովհետեւ ասելու շատ ու շատ բան ունէիմք, բայց դրա համար բառեր չկային: Երկրորդը՝ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ, յաջող պատկերային ոճ ունի: Սակայն գրութիւնը այստեղ եւս խեղաթիւրուած է: Օրինակ՝ բնագրում կայ Աչքերդ գոցի, բայց չքննա: Ֆիլմում լուսն էնք Աչքերդ չգոցես, որը միանգամայն տարբեր բան է յուշում: Լուսն էնք նաեւ ճամբորդի հօրեղբորը վերագրուած այս խօսքը՝ Ես հող ունէի, անուն: Սա նախորդ ֆիլմի պէս, Սփիւռքահային Սարոյեանին անպատկան խօսքով ներկայացնել է: Կան ուրիշ անյարիւր միջամտութիւններ եւս: Երրորդ ֆիլմը՝ ՏԱՆ ԽԱՂԱՂ ՀՈՎ: ՏՈՒՄ, անտեղի յաւելումով խօսում է ծիրանի մասին: Փոփոխութեան է ենթարկել նաեւ Սարոյեանի յիշած, հայ դէմքերի անունները: Օրինակ՝ սպասազրկան շարժումների վիպասան Բաֆֆին, ֆիլմի հեղինակները դարձրել են վարդան Մամիկոնեան: Մի դէմք, որն Բ. Աշխարհամարտից յետոյ, զրկուած իր պատմական կրօնական լիցքից, ասրբեր բովանդակութեամբ, վերադարձնելու ժողովրդականացուել էր սովետական Հայաստանում: Տիկնիկային ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԵՐ ԳԻՒՂՈՒՄ-ը նիւթ ունի Ա. աշխարհամարտի օրերը: Անկախ նրանից, որ կցուած երաժշտութիւնը անտեղի եւ յաւելեալ չէա է պարտադրում պատուհին, տիկնիկային ոճը շատ յարմար է Սարոյեանին: Ժամանակագրական ու բովանդակութեան անյարիւր միջամտումները ներկայ են նաեւ այս գործում: Օրինակ՝ բուն պատմուածքում յիշատակուած է Չարլի Չափլինի Զէմֆի Ի Ու-ը¹⁵ ֆիլմի ձայներից մեկ յուշում է Ոսկի Փնտռողները¹⁶ ֆիլմի մէկ դրուագը:

ԱՐՏԱՔՍՈՒՄ

Փոքր տարիքից ես գրել սկսեցի անիմատուիւնից, անօդատակարարութիւնից, աննշանակութիւնից, անկարեւորութիւնից, ազգատուութիւնից, ստրկութիւնից, վատառողջութիւնից, յուսահատութիւնից, խեղճութիւնից եւ բոլոր տեսակի անգրաւիչ, բնական ու անխուսափելի բաներից խոյս տալու համար: Ես յաջողել եմ իմ խեղճութիւնը բաւականին արդիւնաբեր կերպով ծածկուած պահել: Գրել է Սարոյեանը: Ես իր եղբայրիմ¹⁷ վէպը, յոռետես լինելու բերումով, հիւանդագին եւ ճնշիչ գործ է համարել: Յաւել է, որ այնտեղ բացակայ է ժպիտը: Հետաքրքիր է, հէնց այդ գրութեան հիման վրայ իրագործուած ԱՐՏԱՔՍՈՒՄ ֆիլմում է, որ առաջին անգամ լինելով, Սարոյեանի արձակի հոսքին համապատասխան, պատկերային գլխաւոր լեզու ու ոճ է մշակուել: Բեմադրիչը՝ Անդրէյ Զուպրինցեւ¹⁸,

ուշիմօրէն շարժարուեստի լեզուով ապրեցրել, բացայայտել ու հնչեցրել է Սարոյեանի վէպի խորքը: Ես զուսպ միջոցներով, առանց որեւէ զգացումով հնարքի, յաջողել է մեկ հարցը հեղինակի դառնութիւնն ու տագնապը: Անտարկտիկայի միջօրս, ԱՐՏԱՔՍՈՒՄ-ը, Սարոյեանի գրութիւնից քաղուած ամենայնօրեայ իրագործումն է շարժարուեստում: Յատկապէս պիտի ընդգծենք, որ ֆիլմի եւ վէպի միջեւ գտնուող տարբերութիւններն այստեղ գործում են, հեղինակի գրական գագաթական հոսքին ու լեզուին ոչ թէ հակառակ, այլ շարժարուեստի գըծով ազնուօրէն, ապրեցնում ու բացայայտում են Սարոյեանի խենթութեան հասած մղումն ու թաքնուած թախիծը: Դիտողը, առաջին անգամ լինելով, յասակօրէն տեսնում է գրողի իւրայատուկ, ոչ դրամատիկ հոգեբանական ընթացք հետեւող ոճն ու զգացումը, որն բխել է խորապէս ապրուած, զգացումով վիճակների խորքից եւ որ գերէ է ըզգայացուցիչ գրուածքներ պատկերելու միտումից: Սարոյեանի գրականութիւնը մտքի, զգացմունքի շարժման շարունակական հոսքն է: Մի բան, որ խիստ յարմար է շարժարուեստին: Ստեղծագործութիւնը արուեստ է, ոչ թէ պատմութիւն. իսկ արուեստը երգից է սերում: Եթէ նոյնիսկ դա ասելուութեամբ լեզուն արուեստ է, միեւնոյն է, երգից է սերում: /.../ Արուեստի նշմարտութիւնը զգացմունքի նշմարտութիւնն է. ոչ բանակալուութեան¹⁹: Գրել է նա:

ԱՐՏԱՔՍՈՒՄ-ը նկարահանուել է Եւրոպայի մի քանի երկրներում: Այն մեծապէս գնահատուեց 2007ի Գաննի Փառատօնում որպէս ուսուական արտադրութիւն եւ պարգեւատրուեց լաւագոյն դերասանի մըրցանակով: Ֆիլմը, որ անմիջապէս ներառուել էր Հայաստանի Ոսկէ Ծիրան Փառատօնում, արհամարհուեց այնտեղ: Սա ինքնին կրկին հաստատում էր թէ Սարոյեանի բուն արժանիքների նկատմամբ, Հայաստանում ինչպիսի անտարբերութիւն կայ եւ ընդհանրապէս որքան մակերեսայնօրէն է նաեւ ընկալուել միշտ: Երբ Սարոյեանը կեանքի վերջին տարիներում՝ 1976-ին, կըրկին Սովետական Հայաստան այցելեց, մերժեց վարդգէս Համադապեանի հրահրը, որ 1978ին այնտեղ, պաշտօնապէս իր ծննդեան 70ամեայ յորեխանը տօնուի: Միեւնոյն օրերին, Կիւնյի Տանը մի շարք հայկական ֆիլմեր դիտելուց յետոյ, նա ֆիլմաշխատողներին հետեւեալ հարցն ուղղեց. «Ի՞նչ է ձեր նպատակը»: Մի հարց, որ ի զօրու է դեռ մինչեւ այսօր:

ԱՐՏԻ ՅՈՎ ՀԱՆՆԻՍԵԱՆ
Փ ա թ ի գ
Ապրիլ-Մայիս 2008
Ծանօթ:
1) Բարի Հսկան-Հանդիպումներ Ուիլիամ Սարոյեանի հետ Լ Վահագն Դաւթ-

- Խան (Սովետական Գրող, Երեւան 1979) էջ 163:
- 2) The Daring Young Man on the Flying Trapeze (NY, Random House, 1934).
- 3) Howard Estabrook.
- 4) Clarence Brown.
- 5) Clarence Brown : Garbo & Beyond; by Scott Eyman — The Velvet Light Trap, N°18, Spring 1978.
- 6) Thornton Wilder.
- 7) Our Town.
- 8) H. C. Porter.
- 9) James Whale.
- 10) SIGHT & SOUND (1967 / 1968, London).
- 11) ԻնՉԻ ՀԱՄԱՐ է կինՕՆ, Սովետական Արուեստ, 1, 1961:
- 12) Andrei Simonov.
- 13) Boris Yachin.
- 14) Սովետական Արուեստ, 8, 1988:
- 15) Shoulder Arms (1918).
- 16) Gold Rush (1925).
- 17) The Laughing Matter (Doubeday, N.Y., 1953).
- 18) Andrei Zviaguintsev.
- 19) W. Saroyan, Razzle-Dazzle (Harcourt, Brace&Co., N.Y., 1942), p.125.

Յ Ո Ւ Յ Ա Կ՝

Ո Ւ Ի Լ Ի Ը Մ Ս Ա Ր Ո Յ Ե Ա Ն Ի
Ե Ր Կ Ե Ր Ի Հ Ի Մ Ա Ն Վ Ր Ա Յ
Ն Կ Ա Ր Ա Հ Ա Ն Ո Ւ Ա Մ Ֆ Ի Լ Մ Ե Ր Ի

(Ընդգրկուած է միայն շարժարուեստի մարզում նկարահանուածը: Բացառուած է հետուստատեսութեան համար արտադրուածը)

Հոլիվուտեան արտադրութիւններ (ԱՄՆ)

Կարնամետրաժ (խաղարկային)՝ Կ(Խ)
— The Good Job (ԼԱԻ ԳՈՐԾ) (1942)
director : William Saroyan.

Երկարամետրաժ (խաղարկային)՝ Ե(Խ)
— The Human Comedy (ՄԱՐԳԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ) (1942)
starring : Mickey Rooney
director : Clarence Brown; 117 min.

Ե(Խ) — The Time of Your Life (ԳՈ ԿԵԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ) (1948)
starring : James Cagney and Jeanne Cagney
direction : H. C. Potter; 101 min.

Կ(Խ) — Hello Out There (ՀԷՅ, Ո՞Վ ԿԱՅ) (1949)
starring : Henry Morgan and Marjorie Steele
director : James Whale; 40 min.

Սովետական արտադրութիւններ (ՍՍՄ)

Կ(Խ) — Hello Out There (ՀԷՅ, Ո՞Վ ԿԱՅ) (1963)
directors : Boris Yachin, Andrei Smirnov; 40 min.

Սովետ. Հայաստանի արտադրութիւններ (ՍՍՀՄ)

Ե(Խ) — ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՈՒՆԵՐՈՒՄ Է (1975)
Դերակատարներ՝ Սոս Սարգսեան, Իզնուտի Սմոկտուչնովսկի
բեմադրիչ՝ Լեւոն Գրիգորեան. 70 րոպէ:

Կ(Խ) — ՀԷՅ, Ո՞Վ ԿԱՅ ԱՅՆՏԵՂ (1979)
Դերակատարներ՝ Ա. Պողոսեան, Մ. Սէթ-խանեան
բեմադրիչ՝ Մարատ Վարժապետեան. 48 րոպէ:

Կ(Խ) — ՎԱՐՍԱՎԻՐԸ, ՈՐԻ ՔԵՆՈՒ ԳԸ-ԼՈՒԵԸ ԿՅԵԼ-ՊՈԿԵԼ ԷՐ ՎԱՐԺՅՐԱԾ ՎԱԳՐԸ (1983)
Դերակատարներ՝ Դ. Սարգսեան, Մ. Զաքոյեան
բեմադրիչ՝ Վ. Մելքոնեան. 18 րոպէ:

Կ(Խ) — 1854 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՅՈՒՐՏ ՁՄԵՈՒԸ (1988)
Դերակատարներ՝ Մ. Զանիրեկեան, Ա. Գասպարեան
բեմադրիչ՝ Վ. Մելքոնեան. 18 րոպէ:

Կարնամետրաժ (Գծանկարչական)՝ Կ(Գ)
Կ(Գ Լ Տ) — ՆՈՒՆԵՆՆԵՐԸ (1987)
բեմադրիչ՝ Ի. Մուրադեան. 9 րոպէ:

Կարնամետրաժ (Տիկնիկային)
Կ(Գ Լ Տ) — ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԵՐ ԳԻՒՂՈՒՄ (1989)
բեմադրիչ՝ Գ. Մարտիրոսեան. 10 րոպէ:

Կ(Խ) — ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ (1990)
բեմադրիչ՝ Ի. Մուրադեան. 9 րոպէ:

Կ(Գ) — ՏԱՆ ԽԱՂԱՂ ՀՈՎ:ՏՈՒՄ (1991)
բեմադրիչ՝ Ի. Մուրադեան. 9 րոպէ:

Ռուսական արտադրութիւն

Ե(Խ) — Izgnanie / Le Bannissement / (Արտախուսում), (2007)
starring : Konstantin Lavronenko, Maria Bonnevie
director : Andrei Zviaguintsev; 150 min.

ԿԻՐԱԿԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 5
DIMANCHE
5 OCTOBRE
2008



HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE FONDÉ EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԹԻՒ 345

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

Բ Ա Տ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ֆրանսա : Տար. 250 երօ — Վեցամսեայ : 135 երօ
Արևոստահատ : Տար. 300 երօ (Ամբօրեայ տարեմուտ)
270 երօ (Շաբաթ-ապակ տարեմուտ) — Հատը : 1,20 երօ
C.C.P. Paris 15069-82 E

LE NUMERO : 1,20 €

ՏԻՊ. ՏԱՐԻ - ԹԻՒ 22-045

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

84° ANNEE — N° 22-045

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Հ Ա Յ Ե Ր Է Ն Ը՝ Մ Ի Ա Լ Ե Ջ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Բ Ե Ր Դ Ե Ր Ո Ւ Ն Դ Ի Մ Ա Ց

ԼԻԻՍԻ ԱՍԼԱՆԵԱՆԻՆ՝
Մանկախնամ,
(Assistante Maternelle)

Ե. Ժ. Գ. Գ. ՏԱԼԿԱԼԵԱՆԻՆ՝
Լեզուարան

Անտարակոյս, մանուկի մը համար, մինչեւ երեք տարեկան հասակը, ամէնէն անջնջելի ու անփոխարինելի շրջանն է լեզուական ու հոգեկան զանազան կարողութիւններու ծրարակալումն ու աշխարհն ընկալելու անկրկնելի փորձառութեան: Եւ եթէ ան բախտն ունենայ, ծնողները այդ ուղղութեամբ աշխատած ըլլան, անոր ամէնէն բեղուն շրջանը կ'ըլլայ նաեւ երկրագնդէն անտառին հիմնաքարերու հաստատումին:

Սփիւռեան առաջին տպաւորութիւններ՝ ԵՐԿԵՐԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒՄՆԵՐԻՆ

Ինչ կը պատահի մինչեւ երեք տարեկան: Ֆիզիքական աճին կողքին, ինչ հոգեկան ու լեզուական ձեռքբերումներ կ'ունենայ: Մանկան, կեանքին հետ առաջին հանդիպումներն են, առաջին տպաւորութիւնները, որոնք բոլորը իրենց հետքերը կը ձգեն նորածինին հոգիին ու ուղեղին մէջ, որուն վրայ, որուն հետ, կը կառուցուի մանուկին աշխարհընկալումը, կ'ապրի կեանքի իր առաջին փորձառութիւնը: Որքան տպաւորութիւնները հարուստ ըլլան, այնքան երախտին հոգեկան աշխարհը հարուստ կը դառնայ մանուկ հասակէն:

Այս տպաւորութիւններուն ստացումը կը կատարուի նաեւ լեզուի մը կամ լեզուներու միջոցով: Անոր կախարհերի առաջին գուտ ձայնային բարբառումներէն մինչեւ յօդաւորուած ձայներու արտաբերումն ու անոնց իմաստային առնչութիւններու հաստատումը, հոգեկան զարգացման հսկայական ուսումներ կը կատարէ, որոնց վրայ ապագային դեռ պիտի կառուցուին նոր խօսելու, կարգալու, գրելու, եւ ընդհանրապէս ազատ արտայայտուելու, ստեղծագործելու կարողութիւնները:

Այս էական ժամանակաշրջանին է նաեւ, որ հայ մանուկը կ'ապրի ըստ փիլոսոֆային իր առաջին փորձառութիւնները, ընտանեկան յարկէն ներս եւ դուրս, կը ստանայ սպորումներ, ձայնային ու զգայական, զգացական մասնաւոր վերաբերում ու տպաւորութիւններ որոնք կը տարբերին ըստ աշխարհագրական վայրին, ըստ ընտանիքէն ներս հրշակած լեզուներուն ու տիրող միջավայրին: Լեզուներուն միջեւ կը ստեղծուի գոյակցական դաշտ մը, որ կ'աճի, կը զարգանայ ըստ լեզուներուն կրած ու փոխանցած զգացական ու մտաւոր բովանդակութեան ճիւղերէն:

ԵՐԿԵՐԻՈՒԹԵԱՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Եւ լեզուները թարգմանները կը հանդիսանան հայկական ու տեղական մշակոյթներուն: Կարելի է ըսել մշակոյթներու առաջին հանդիպումները տեղի կ'ունենան այս պահուն, որոնք յետագային մանուկին առօրեային անբաժանելի մասնիկը պիտի դառնան, անոր վերջնական, հոգեկան զարգացման ու ներքին բախումներուն ու հաշտեցումներուն առանցքը, երկու մշակոյթներու գոյակցութեան դաշտը:

Ծնողները, ընտանիքը, երախտներուն համար օրինակի դեր կը կատարեն: Այն ինչ, զարոցական տարիքին, ուսուցիչը կամ ուսուցիչներն ալ պիտի ծառայեն իբր օրինակ: Ծնողներուն, իրենց բնածին լեզուին հանդէպ ունեցած ուշադրութիւնն ու կապը եւ այլ լեզուներուն հանդէպ ունեցած վերաբերումը, կ'առաջնորդեն դեռատու մանուկը իր լեզուական աճին, ինքնաձեւանումն ու արտաքին աշխարհին հետ յարաբերելու առաջին քայլերուն մէջ որոնց հետքերուն հետեւելով, ան կ'իւրացնէ իրեն հըրամցուածը:

Գիտական հետազոտական հրահայտական կարուած մըն է մինչեւ երեք տարեկան մանուկներու լեզուական կարողութիւններու ձեռքբերման ուսումնասիրութիւնը: Կարուած մը որ բազմազան կրթանքներու թիրախն է՝ լեզուագիտութիւն, հոգեբանութիւն, մանկաբուժութիւն, նեարդային բժշկական գիտութիւն եւ մանկավարժական գիտութիւններ:

Երախտն մինչեւ երեք տարեկան իր ունեցած լեզուական փորձառութեամբ իւրացուցած կ'ըլլայ լեզուին առնչուած յետագայ զարգացման, այսինքն՝ մանկապարտէզէն սկսեալ մինչեւ նախակրթարանի միջնակարգի ու թերեւս համալսարանի մէջ դասաւանդուած կրթանքներուն բոլոր նախադրեանները: Բայց նաեւ այս ժամանակաշրջանին, անոր ինքնութիւնը կը թրծուի փիլոսոֆան երկրակալութեային խորին փորձառութեամբ: Յաճախ, դառն փորձառութիւն մը, այնքանով որ ինչ որ կը ստանայ հայկականէն այն լիարժէք հիմնաւոր ժառանգութիւնը չէ, որուն կտակատէրն է, ըստ ինքեան:

Այս ժամանակաշրջանին կարեւորութեան անդրադարձը հիմնականին մէջ միայն ծնողներուն ու շարժութեան ենթակայ կարուած մը հանդիսացած է եւ շատ յաճախ բոլորովին լեզուած կարուած մը, գոնէ Ֆրանսայի հայ համայնքային կա-

ռոյցներուն կողմէ, բաղդատած դպրոցներու մասին եղած վերաբերումին ու քարոզչութեան եւ կամ ընդհանրապէս մշակութային տուններէ ու զանազան ակումբներէ ներս գոյութիւն ունեցող աւելի բարձր տարիքի մանուկներու կամ պատանիներուն ուղղուած հայերէն լեզուի դասընթացներ հաստատելու ջանադրութեան: Արդէն, ընդհանրապէս զարոցներու հանդէպ գոյութիւն ունեցող ուշադրութիւնը բոլորովին անբաւարար է, ուր մնաց նախադարձական շրջանի երախտներուն ցուցաբերուածը, որ պարզապէս չգոյութիւն մըն է, ոչնչութիւն:

Թէեւ այս նախադարձական շրջանի պատրաստութիւնը անզուգահե՛ս նուէր մըն է թէ երախտին, թէ հայ համայնքին ու հիւրընկալ երկրին: Երախտն այս տարիքին կ'իւրացնէ, գրեթէ բնազոյւ, այն բոլոր ինքնութեան կարողները որոնք կը գործածուին իր անմիջական շրջապատին մէջ, որոնց շնորհիւ ան փոքր տարիքէն կը զինուի սպրելու համար, իր հոգեկան աշխարհը կը կառուցէ, կեանքին ու

Գրեց՝ ԺԻՐԱՅՐ ԶՈԼԱՔԱՆ

մշակոյթներուն ընծայած զանազան բարիքները ամբողջութեամբ կարենալ վայելելու ու յետագային ալ անոնց բերելու իր մասնակցութիւնը: Նոյն բանը կարելի է ըսել հայ հաւաքականութեան համար, որուն ամէն մէկ անդամին զարգացումը ընդհ. մակարդակը բարձրացնելու ուղղութեամբ տարուած հիմնաւոր քայլ մըն է: Հիւրընկալ երկրն ալ նպաստի իր բաժինը կը ստանայ ուրիշ լեզուներու եւ մշակոյթներու բերած ներդրումէն:

ՀԱՅԵՐԷՆԸ ԼԵԶՈՒԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՍ

Նախադարձական շրջանին հայերէնի իւրացումը կանխահաս երկրակալութեան բնական ճանապարհն է: Հայկական դպրոց յաճախելու նախապատրաստութիւն մըն է նաեւ: Հայկական դպրոցին մէջ հայերէն լեզուի դասաւանդութեան լիարժէք օգտուելու, դաս կատարելագործելու համար լուազոյս միջոցը: Հայ մանուկը, եթէ մինչեւ երեք տարեկան, ընտանեկան օժանդակման մէջ չէ սպրած երկրակալութեան փորձառութիւնը, արդէն արմատապէս շատ բան կորսնցուցած է, եւ եթէ յետագային բախտն ունենայ հայկական մանկապարտէզ մը յաճախելու, այնուհետ ստանալիք հայերէնի գիտութիւնը լեզուական

պատուաստի արժէք ունի: Այդ պատուաստը կրնայ բռնել եթէ մանկապարտէզը ամուր կրթական ու մանկավարժական հիմքեր ունենայ, այսինքն՝ լեզուական հասարակ բախում հայերէնի ու տեղական լեզուին միջեւ, երկրակալութեան համար զարգացում եւ այս ուղղութեամբ լաւ պատրաստուած անձնակազմ եւ միաժամանակ եթէ ընտանիքն ալ ըմբռնէ երկրակալութեան կարեւորութիւնը եւ տան մէջ արձագանգէ դպրոցը ուսուցուած հայերէնին:

Իսկ եթէ մանուկ մը, մինչեւ վեց-եօթը տարեկան, լեզուներու այս տարրական փորձառութիւնը չապրի, եւ միայն նախակրթարանի տարիքին սկսի հայերէն սորվելու, այդ փորձառութիւնը, գոնէ լեզուի իւրացման առումով, արկածախնդրական է ու անորոշ: Յաճախ, այս իրավիճակը կ'ըսուի թէ համար է որեւէ օտար լեզու սորվելու դրութեան: Սակայն ան աւելի բարդ է քան սոսկ օտար լեզու մը սորվելու երեւոյթը, որ արդէն ինքնին հսկայական ջանք, ժամանակ ու տրամադրութիւն կը պահանջէ, ինչ

որ դժուար գտանելի հոգեվիճակ է վեց-եօթը տարեկան մանուկին մօտ: Կեանքն ու զարոցական դասընթացները այնքան աւելի գրաւիչ պահեր կ'ընծայեն, այնքան աւելի պահանջկոտ ու պարտաւորիչ պայմաններ կը ստեղծեն անոր, որ դժուար թէ ան ինք ըստ ինքեան մղուի հայերէն սորվելու:

Եւ երեւակայեցէք որ այս է շատ մը մշակութային տուններու, աւելումներու ու եկեղեցւոյ կից հաստատուած հայերէն լեզուի դասաւանդման յաճախող մանուկներուն, պատանիներուն պարագան, ուր հայերէնի դասընթացներ կազմակերպուած են միայն նախակրթարանի տարիքէն վեր աշակերտներուն համար: Այս պատճառով ալ անոնց դերը կը մնայ զուտ խորհրդանշական ոչ-հայախօս մանուկներուն համար, իսկ հայախօսներուն համար ալ Ֆրանսերէնի կամ այլ տեղական լեզուին ամէնօրեայ դպրոցական կրթութեան սնուցողական թափը չունենալով կը մնայ աննշան:

ՀԱՅԵՐԷՆԸ ՇՏԱՐՈՒԱԾ ԼԵԶՈՒ

Եւ ինչո՞ւ հայերէն սորվելը ոչ

Հայաստան երախայի մը համար աւելի բարձր է ու անորոշ քան օտար լեզու մը սորվելը: Ենթադրեալ թէ օտար լեզու սորվելը ունի մասնակի համար, ինչպէս նաեւ հայ մասնակի համար անոր ուղեղին մէջ լեզուական անարատ մաքուր էջ մը բաժնու նման է ուր պիտի արձանագրուին նոր լեզուէն ստացուած հրճիչները, բառերն ու քերականական օրէնքները, երբ արդէն տեղական լեզու մը գորտուր կերպով իւրացուած է անոր կողմէ: Իսկ հայերէնի պարագային նոյն վեց-եօթը տարեկան մասնակի համար, կրնայ մաքուր էջ մը բանալու պարագայ մը հանդիսանալ, եթէ ընտանիքէն ներս անոր հետ բնաւ չէ կատարուած հայերէն խօսելու փորձը:

Սակայն, երբ մասնակին հետ հայերէն խօսելու, անոր հայերէն սորվեցնելու փորձեր եղած են տունէն ներս, առանց պէտք եղած միջոցները ձեռք առնուած ըլլալու եւ առանց պէտք եղած ժամանակը յատկացուած ըլլալու լեզուական փորձառութիւն մը փոխանցելու ու ապրեցնելու, մասնակը ընտանեկան անյաշող փորձին փորձառութեամբն ու յիշատակովն է որ կը վերագրուին կամ կ'երթայ հայերէն սորվելու միօրեայ հաստատութեան մօտ: Կան կիսաա մասնագիտ փոխանցման պարագաներ ալ, երբ մեծ հայր կամ մայր մը կամ այլ պարագայ մը ընտանիքէն ներս հայաստանութեան առանցքը հանդիսացած ըլլալով, յանկարծակիօրէն կը հեռանայ: Ընդհանուր առմամբ, նոյնիսկ եթէ լեզուն չէ իւրացուած, հայկական ենթահող մը կրնայ ապրուած ըլլալ տան մէջ, հայկական ինքնութեան տիրող գեղացում մը առկայ ըլլալ, առանց որ լեզուն ամբողջապէս փոխանցելու պայմանները ապահովուած ըլլան: Ուրեմն, յետագային, երբ ուշ տարիքին այդ փոխանցումը կատարելու փորձը կ'ըլլայ դարձեալ կամ միջոցով, պէտք է այդ նախաձեռնութեան գերակատարները՝ այսօրինքն՝ ծնողներն ու դպրոցին պատասխանատուները գիտակից ըլլան այն բոլոր դժուարութիւններուն զորս երախան պիտի զիմազըրաւէ: Երբ պատեմ են բոլոր մանկավարժական յենակներուն, յաջողեցնելու համար այդ ուսուցումը:

Անյաշող փորձը սրբազրիչ, մասնաւոր փոքր տարիքի մանուկներու մօտ, դժուարին հարց է: Փոքր տարիքին ամէնօրեայ գործածութեանէ դուրս այլ լեզու մը սորվելը մասնակին համար ինքնակամ չէ: Այդ որոշումը ընդհանրապէս հաստատութեան կամ ծնողական: Մանուկը կ'ենթարկուի այդ ընտրութեան: Սակայն կրնայ ներքնապէս հակառակ լինել պայմաններն ու կարճակերպութիւնը համոզիչ չըլլան իրեն համար:

Պետական դպրոցական համակարգը օտար լեզուներու դասաւանդումը կը պարտադրէ ըստ պետականօրէն սահմանուած կրթական ծրագրի: Երբ այդ որոշումը ընտանեկան նախաձեռնութիւն է, նորէն պարտադրութիւն մըն է մանուկին համար, սակայն պարտադրութիւն մը դպրոցական միջավայրէն, ուսման սահմանուած վայրէն ու անոր սահմանած ժամերէն դուրս: Ուրեմն, կարելի եղածին չափ այդ պարտադրութիւնը պէտք է հաճելի ընկերային ու ստեղծագործական ըլլալու պայմանները յարգել, երբ ընկերային ու ինք ըստ ինքեան պահանջ չէ:

Մէկ խօսքով՝ հայերէնը հայ մանուկին համար ինքնութեանական անընտրելիութիւններ ունի, զորս չունին ընդհանրապէս օտար լեզուներու ուսուցման հետեւող մանուկները:

Սակայն, այս չինչանակեր թէ հայերէնի ուսուցման համար չօգտագործուին օտար լեզուներ ուսուցանելու մեթոտները, որոնք հետաքրքրական ու անհրաժեշտ են: Այստեղ է որ կը դադուրի դպրոցներուն եւ այլ հայերէնի դասընթացներուն ստանձնած ծանր պարտականութիւնը որոնք յանձն կ'առնեն այն ինչ որ ընտանիքը չէ կրցած իրականացնել, այսինքն՝ երկրակուլութեան հող մշակել: Ընտանիքը չէ սնած համայնքային ներգրումէն, ոչ ալ համայնքը՝ ընտանիքներու ներգրումէն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՋՄԱՆԵՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԱԾԻՔ

Ընտանեկան ու համայնքային կառուցելու վեր կայ նաեւ պետական լեզուական ու կրթական քաղաքականութիւնը եւ տեղական երկրին սահմանադրական ու օրէնդրական համակարգին ստեղծած իրավիճակը որ թոյլտուութիւններու եւ կաշկանդումներու օրինական դաշտ մը կը սահմանէ, ուր դաւաճային, փոքրամասնական ու օտար լեզուներն ու մշակութիւնը ապրելու, գոյատեւելու եւ գոյակցելու դանազան հարաւորութիւններ ու արգելքներ կ'ունենան: Ուր համայնքային կառուցներու գործելու, կրթական ու մշակութային գործունէութիւն ծառայելու իրաւասութիւնները կը սահմանուին: Եւ այս օրինական սահմանին մէջն է որ կարելի է միայն հայերէն լեզուի իւրացման ընդունելի քաղաքականութիւն մը մշակել:

Արդարեւ, եթէ Փրանսայի պարտան նկատի ունենանք, այն ինչ որ անցեալին անհնար էր ընել Փրանսայի պետութեան Փրանսայի սակեզրոն լեզուական քաղաքականութեան պատճառով ու անոր կրթական համակարգին այլ փոքրամասնական ու գաւառային լեզուներուն հանդէպ համակեցութեան այլամերթ ու անհամատեղելի կեցածքով, այսօր կարելի կը դառնայ քաղաքական ու քաղաքականութեան Սիւլլիթեան ստեղծումին բերումով:

Եւրոպական Միութիւնը 1992ին կը բուհարկէ Եւրոպական Լեզուներու Ուխտը (Շաքք Էօրօփէէն տէ Լանկ) ², որ լայնատես լեզուական քաղաքականութեան մը որդեգրումն է, որ բազմալեզուային նոր քաղաքական համակարգ մը կը ստեղծէ, ուր հզօր պետական լեզուներու կողքին, ինչպէս՝ անգլերէն, Ֆրանսերէն, գերմաներէն, ելն. և, կան պաշտօնապէս ընդունուած գաւառային ու փոքրամասնութիւններու լեզուներ, որոնք կարգին հայերէնը եւ յատկապէս արեւմտահայերէն տարբերակը, իբր Եւրոպայի գիրկը հաստատուած փոքրամասնութիւններու բնածին լեզուն, որ անհետացման վտանգին ենթակայ ըլլալով պաշտպանութիւն կըրնայ վայելել, նիւթական նեցուկ ստանար Եւրոմիութեան տարածքին մէջ:

Փրանսան կ'ընդունի հայերէնը իբր փոքրամասնական լեզու, թէեւ չէ ստորագրած Եւրոպական Լեզուներու Ուխտը ³: Ներկայիս միայն Կիպրոսի Հանրապետութիւնն է, որ հայերէնը պաշտօնապէս ընդունած է իբր փոքրամասնական բնածին լեզու իր հանրապետութեան տարածքին եւ ստորագրած վերոնշեալ Ուխտը:

Անկախ Հայաստանի Գ. Հանրապետութիւնն ալ ընդունած է Եւրոպական լեզուներու Ուխտը եւ

պաշտօնապէս իր հողատարածքին վրայ ճանչցած մի քանի փոքրամասնական լեզուներ, ինչպէս՝ յունարէնը, սուաբէնը, քրաբէնը, ասորերէնը: Հայաստանի Հանրապետութիւնը հայկական իրակապտութեան մէջ ինքնութեանական նոր ազդեցիկ հասցէ մըն է, սակայն մինչ օրս գրօսաչափային մտայնութիւնը կը գերակշռէ մշակութային ու ինքնութեանական հարցերու լուրջ քննարկումին, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն մէջ:

Մօտիկ ապագային մեծ ապաստաններ պէտք չէ ունենալ, որով իբր անկախ պետութիւն, Հայաստան գեռ անկարող կը մնայ բնիկ հայաստանցի քաղաքացիին անտեսական ու ընկերային տարրական պահանջները գոհացնելու: Մշակութայինն ու կրթականը երկրորդական կամ երրորդական կարգի մնացած կալուածներ են, շատ թէական է ապաստան հայերէնի պաշտպան հանդիսանալու, արեւմտահայերէնի հանդէպ անկանխակալ կեցողածք ցուցաբերելու, ընդհանուր առմամբ հայերէն լեզուի իւրացման քաղաքականութիւն մշակելու պետական քաղաքականութիւն մը: Այսուհանդերձ կարեւոր է ընդգծել որ անչունի պիւրօթահայութիւնը երկփեղկող, իրարու թշնամացող անցեալի խորհրդային շրջանի խանգարիչ գործունէութիւնը:

Փրանսայի մէջ Հայաստանի տարիին նշումը Փրանսա - Հայաստան - Սփիւռք գործակցութեան կարեւոր երեւոյթ մըն էր: Իսկ մշակութային մարզին մէջ «լեզուական» բնագաւառին՝ գրականութեան, թատրոնի, ... գրուած սահմանափակ տեղն ալ խօսուեւ պատկերը բացթողումներու:

ԲՆԱԾԻՆ ԼԵԶՈՒԻ ՓՈՒՍՆՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընտանեկան յարկէն ներս փոքր տարիքին հայերէնի, իբր բնածին լեզու, փոխանցման ճախողութեան պատճառներուն ուսումնասիրութիւնը կրնայ թերեւս անոր առաջին աննելու միջոցներուն մասին մը տածելու մղել: Իսկ եթէ ընտանեկան յարկէն ներս անկարելի է այդ փոխանցումը, կա՞ն արդեօք այլ ընտանեկաններ, ուրիշ ճանապարհներ, ծնողները փոխարինող անձեր կամ կառույցներ, որոնք պիտի կարենային ստանձնել այն ինչ ծնողները չեն կրցած իրականացնել:

Բնածին լեզուի իւրացումը մանուկին մօտ կը կատարուի բնակարանային, ամէնօրեայ չիումով: Անոր յաջողութիւնը ծնողներէն կ'ենթադրէ երեք հիմնական պայմաններու առկայութիւնը:

Ա - Համոզում բնածին լեզուի փոխանցման կարեւորութեան եւ գիտակցութիւն անոր ինքնութեանական արժէքին,

Բ - Ժամանակ,

Գ - Հայերէնի բաւարար գիտութիւն ու միջոցներ:

Երրորդ պայմանը՝ հայերէնի գիտութիւնը, անհրաժեշտութիւն մըն է, նոյնպէս՝ հայկական մշակութային փոքրիկ շտեմարանի մը գոյութիւնը, մանկական գիրքերու, երգերու, խաղերու:

Երկրորդ պայմանը՝ Ժամանակն ալ մեծ հարց է, յատկապէս ներկայ գերած քաղաքներու տնտեսական ու ընկերային պայմաններուն մէջ: Երբ երկու ծնողները կ'աշխատին, եւ ընտանիքէն ներս ուրիշ հայերէն գիտցող անձ մը չի կրնար ըզբաղիլ անոնց դասակին հետ, ան կը յանձնուի մանկապարտէզի մը կամ մանկախնամի մը: Այս պահէն արդէն հայերէնի ստացումը վտանգը

ած կ'ըլլայ, շարաթը հինգ օր երախան կարուած ըլլալով ընտանեկան անխնայական շրջանակէն:

Իսկ առաջին պայմանը էական է: Անոր բացակայութեան կարելի չէ յաջողցնել որեւէ լեզուական փոխանցում: Եթէ ծնողներուն մօտ տիրէ այն մտայնութիւնը թէ «Ինչ բանի պիտի ծառայէ հայերէն խօսիլը հիւրընկալ երկրի մէջ, երբ հարցը երախաներուն ապագային կ'վերաբերի, լեզու սորվելը պէտք է ծառայէ ապագային դիւրութեամբ գործ մը գտնելու», կամ մինչև անոնց անտեղի մտալիսութիւնը թէ «հայերէն սորվելը կրնայ վտանկ երախային Փրանսերէն կամ տեղական լեզուն սորվելուն» եւ գեոն «նախ Փրանսերէնը թող սորվել, յետոյ՝ հայերէնը» եւ կամ շուտով տեղական միջավայրին համարվում քաղաքացի երեւելու, տեղացիին նմանելու տրամադրութիւն մը: Նոր գաղթած հայ ընտանիքներուն համար՝ օտար կամ այլ երրորդ աշխարհէն վախած անձի երեւոյթը թօթափելու ցանկութիւնը: Ստանամուսնութիւններու պարագային եւ նոյնիսկ հայ գոյգերու պարագային, այլ բարձր կացութիւններ կը ստեղծուին եթէ ամուսիններէն մէկը որեւէ պատճառով հակառակի հայերէնի ուսման:

Ընդհանրապէս լայնատեսութիւնը եւ մշակութաիրութիւնը բնական դեղատոմսերն են նման դիրքերու առաջին աննելու համար: Բայց կայ նաեւ Հայերուս պարագային այլ էական ազդակ մը բնածին հայաստանութեան կառելու: հայերէնը ապրեցնել, կը նշանակէ իբր ինքնանկախ հաւաքականութիւն ուրիշ հաւաքականութիւններու կողքին գոյատեւելու իրաւունք ստանալ, որուն շնորհիւ կարելի է հետապնդել Հայու ճակատագրին առնչուած բոլոր միւս պայքարները: Հայերէնը ապրեցնել Եղեռնի դէմ եղած առաջին եւ մեծագոյն յաղթանակն է, լեզուով մշակոյթը կ'ապրի, միայն զոհերուն եւ նահատակներուն յիշատակը չէ որ կը յաւերժանայ, այլ անոնք կը շարունակեն ապրիլ իրենց բնորոշ ու վերապրողներու սերունդին փոխանցուած մշակութային ժառանգութեան ընդմէջէն:

ՄԱՆԿԱՍԵՆԱՄՆԵՐ ՈՒ ՄԱՆԿԱՄՍՈՒՐՆԵՐ ԿԱՆՈՒՆԱԿԱՆ ԵՐԿՂԵՆՆԵՐԸ ԵՒ ՆՈՐ ԳՆՆԵՐԸ

Փրանսահայ հաւաքականութիւնը բնաւ չէ փորձած օգտուիլ Փրանսական մանկախնամներու ու մանկապարտէզներու համար հաստատուած գրութեանէն, որ հակառակ ներգրում մը պիտի ըլլար նախամանկապարտէզեան շրջանի մանուկներուն երկլեզուութեան դուռը բանալու: Արդարեւ, Փրանսա գաւառան պաշտօնական եւ անպաշտօն մարմիններու միջոցաւ, ինչպէս՝ Ընտանեկան Յատկացումներու Գանձանակ (Գէս տ'Ալլոբատիոն Ծաւիլիալ), Ընկերային Ապահովագրութիւն, քաղաքապետարան, թաղապետարան, նաեւ՝ անկախ ընկերութիւններ ու հաստատութիւններ, հիմնած են մանկապարտէզներու պատասխանատու մանկախնամներ, որոնք կ'օգնեն ծնողներու բերթթեցնելու, անոնց աշխատանքի ժամերուն եւ արձակ օրերուն, նախադպրոցական տարիքէն մինչև 5-6 տարեկան մանուկներուն խնամքը յանձն առնելով:

Այս գրութեանէն կ'օգտուին բնականաբար բոլոր այն հայ ծնողները որոնք աշխատանքի ժամերուն չեն կրնար իրենց զակին հետ զբաղիլ: Այս գրութիւնը կարելի է նաեւ գործածել կանխահաս երկլեզուութեան

ամբողջական համար, անոնց կողմից որոնք կարողություն ունենան հայերենի գիտություն պահպանելու և լեզուական փոխանցումը կատարելու, անոնք կրնան հայ մանկախնամներու դերակրողները որպեսզի իրենց զուգահեռ պահեն եւ միաժամանակ մասնակցի հայերենը իւրացրելու և բնական պայմաններում մէջ եւ նաեւ իրեն հասակակիցներու շրջակայքում մէջ, որովհետեւ մանկախնամ մը պաշտօնագրի կրնայ միաժամանակ մինչեւ երեք երախայ պահել իր տան մէջ:

Այդ դրութեան կրնան նաեւ օգտուել հայերէն լաւ գիտցող ծրարներ որոնք երբ նորածին երախայ մը ունենան, կրնան ուրիշ ընտանիքներէ երկու երախայ ալ ընդունել իրենց տան մէջ, իբր վարձատրուած աշխատանք, եւ իրենց պակաս ինամելու զուգահեռ օգտակար ըլլալ նաեւ ուրիշ ընտանիքներու:

Ասիկէ անդին կարելի է նաեւ ծրարական կամ ընկերակցական մանկամտերնէր բանալ ու պաշտօնագրի ընդունելի երախաներ ու պետական նպատակներ ստանալ զայն տնօրինելու համար:

Ահաւասիկ, նոր կրթական ու մշակութային ասպարէզ մը հայերի տասարդութեան եւ գործելու տարիքի անձերու համար, որոնք մասնագիտական աշխատանք տանելով միաժամանակ պիտի նպաստեն ընտանեկան հայերէնի վերահաստատման ընտանիքներէն ներս ու անոնց զուակները բնական եղանակով սորվին հայերէնը երկլեզու կամ բազմալեզու միջավայրի մէջ: Ասպարէզ մը որ աւելի արդասարբէր է քան հայերէնի ուսուցիչներուն որ ներկայիս շատ սահմանափակ կը մնայ, նկատի առնելով հայկական դպրոցներուն սահմանափակ թիւը եւ այնտեղ պաշտօնավարելու կանչուած հայ ուսուցիչներուն սահմանափակ պահանջը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԿՈՒՈՒԱՆԸ

Մինչեւ երեք տարեկան, նախամանկապարտէզեան շրջանին ստացուած ու ապրուած լեզուական մշակույթը անփոխարինելի է: Եւ այս փամանակահատուածին համար ծրարողները մշակուած կրթական թելադրանքներու ու տարրական ծրագրի կարիքն ունին: Նաև՝ քաջալերանքի կարիքը, մանկավարժական տարրական գիտելիքներուն ծանօթանալու, հետաքրքրուելու երկլեզուութեան յենակներով: Ծնողներու համար արհեստավարժ մանկախնամներու սերունդի մը պատրաստութիւնը և տեղեկատուական ցանց մը, հսկայական ներդրում մը պիտի ըլլար այս կալուածէն ներս:

Այսպէս նախադպրոցական շրջանի հայերէնի փոխանցման հարցը կը վերիմաստաւորէ հայերէնի ուսուցման համայնքային համակարգը, փոքր ու մեծ կառույցներուն աշխատանքը, կը վերաբերէր ընտանեկան յարկէն սկսեալ մինչեւ միօրեայ եւ ամէնօրեայ դպրոցներու, մշակութային տուններու, եկեղեցւոյ աշխատանքը, մինչեւ արուեստագէտներուն անտեսուած դերը որոնք մանկական աշխարհին համար մշակութային ու մանկավարժական գեղարուեստական ծրագրերն են իրենց քաջալերանքը, երգեր պատրաստող մշակներ են: Ընտանիքէն ներս հայերէնի վերահաստատումը հայկական դպրոցական ցանցի մը ստեղծումին նախապայմանն է:

Երրորդական Միութիւնը, իբր բազմազգեան զերպետութիւն, բազմալեզուութեան նոր տարածք մըն է ու նոր փորձառութիւն մը, ուր Յը

րանսան ալ իբր հիմնադիր պետութիւն յամբարձալ կը բացուի բազմալեզուութեան: Հայերէնի գործածութեան համար ալ այլ լեզուներու կողքին գոյատեւելու ու զարգանալու նոր հորիզոն մը կ'ուրուագծուի, եթէ անշուշտ այդ առիթը նպատակայարմարօրէն օգտագործուի հայ համայնքներուն կողմէ:

Աշխարհայնացումի դարուն համատարած միալեզուական վտանգը բոլոր ազգերու գլխուն կանգնած է դամոկլեան սուրի նման: Անգլերէնի միահեծան իշխանութիւնը կը սպառնայ բոլոր լեզուներու զարգացման: Ասոր կողքին կան նաեւ այլ պետութիւններու սահմանած միալեզուութեան աքցաններ, ինչպէս Ֆրանսերէնը, Ֆրանսայի մէջ, թրքերէնը՝ Թուրքիոյ մէջ, արաբերէնը՝ Միջին Արևելքի մէջ, նոյնիսկ՝ արևելահայերէնը՝ Հայաստանի մէջ: Միալեզուութիւնը, ըլլայ ան անգլերէն, Ֆրանսերէն կամ հայերէն, մէկ լեզուի մէջ լծանալու, մէկ լեզուամտածողութեամբ սահմանափակուելու վտանգը կը ներկայացնէ, ուրիշին, այլին բացուելու հնարաւորութեան, այլընտրութեան կարողութեան ինքնազրկում է: Ընտանիքի մէջ հայերէնի վերահաստատումը կարելի է կրնան մըն է պայքարելու մշակութային ինքնուրոյնութիւն պահպանելու, միատեսակ ու միահարթակ ընկերային ու մշակութային արժէքներու տիրապետութեան ձեռքազատելու, այլօրէն մտածելու ազատութիւն պաշտպանելու: Ընտանեկան հայերէնը երկլեզուութեան բացուելու սեմնն է: Ան ինքնութեանական պայքարի հիմք է եւ միաժամանակ հաւաքական մշակութային լծացումի դէմ մղուած դադարաբանական պայքար:

ՃԻՐԱՅՐ ՉՈՒԱՔԵԱՆ

(1) Ժիլպէր Ծալկալեան - լեզուաբան եւ կանխահաս երկլեզուութեան մասնագէտ: Ունի բազմաթիւ գիտական յօդուածներ եւ երկու հրատարակուած աշխատանքներ՝ Gilbert Dalgalian — *Enfances Plurilingues* (2000), Ed. l'Harmattan; *Reconstruire l'éducation — ou le désir d'apprendre* (2007), Ed. Temps.

(2) Եւրոպական Լեզուներու Ուխտը (Charte Européenne des Langues) նպատակ ունի պաշտպանելու, ֆաշլաբելու պատմականօրէն Եւրոպայի տարածքին հաստատուած ու խօսուած գաւառային ու փոքրամասնական լեզուները:

(3) Ֆրանսայի Սահմանադրական հորիւորդը 1999ին ընդմիջեց Ֆրանսայի պետութեան կողմէ Եւրոպական Լեզուներու Ուխտի ուղեգրումը, աւարելով որ ան կը հակասէ Ֆրանսայի Սահմանադրութեան 2րդ յօդուածի տրամադրութեան՝ «Հանրապետութեան լեզուն ֆրանսերէնն է»: Սակայն, 2008 Յուլիսին սահմանադրական բարեփոխումով մը, 75-1 յօդուած, Ֆրանսան գաւառական լեզուները ընդունեցաւ իբր ազգային ժառանգութիւն:

(4) Տե՛ս. «ԿՈՉ "ԾՆՈՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՄԱՆ ԻՐ"»-ը, Լաբա Վարդանեան, «Յատաչ», 2004 Սեպտ. 2:

(5) Այս յօդուածին մէջ գործածած եմ բնածին կամ ընտանեկան հայերէն և ոչ՝ «մայրենի» եզրը, նորածին մանուկին ստիպած առաջին լեզուն կամ լեզուները բնորոշելու համար: Ինչո՞ւ:

«Մայրենի»-ի հասկացութիւնը, նեղ կու գայ մեր այսօրուան բազմալեզու իրականութեան լեզուական դրութիւնը բացատրելու: Արդէն եղեռնէն ու տարագրութեան շրջանէն ի վեր անորոշ եւ անոր իմաստային եզրերը: Սփիւռքի մէջ,

ԵՐԱՅԱՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԶԱՆԱԶԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ (*)

Երկու հիմնական եղանակներ գոյութիւն ունին.

Ա - Հաւաքական պահպանութեան կեդրոնները

Բ - Անհատական պահպանութեան միջոցները

Ա - ՀԱՄԱԿԱՅԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆՆԵՐԸ

Երայսաներ պահելու զանազան կառոյցներ գոյութիւն ունին որոնք կրնան այս մարզին մէջ ծնողները գահացնել՝ մանկամտեր, մանկապահոց (halte-garderie), մանուկներու այլազան ընդունարաններ (structure multi-accueil) եւ մանուկներու պարտէզ (jardin d'enfants): Բոլոր այս հաստատութիւնները ենթակայ են յատուկ կանոնակալութեան եւ ստիպուած են գործելու Շրջանային Ընդհանուր հորիւորդի կողմէ մասնաւոր արտօնագիր ստանալէ ետք:

Գետափ մանկական պահպանութեան արհեստավարժ գործողներ կ'ապահովեն այդ աշխատանքը: Ընդունելութեան վայրը կը յարգէ անվտանգութեան չափանիշները եւ անոր ներքին կարգն ու սարքը կը խրախուսէ մանուկներու ժրջանութիւնը:

Ըստ կառոյցին ներքին սարքաւորումին, երայսաները կրնան ընդունուիլ կանոնաւոր կամ ժամանակաւոր կերպով մինչեւ իրենց մանկապարտէզ արձանագրութիւնը:

Կը մատակարարուին շրջանային կառավարական մարմնի մը կողմէ (թաղապետ, ֆալապետ, գիւղապետ, եւլն.) կամ անձնական նախաձեռնութեամբ տնտեսուած կառոյցներով (ընկերակցութիւն, ընկերութիւն...):

Ընտանեկան Յատկացումներու Գանձարանը (Caisse d'Allocation Familiale) կ'օժանդակէ բոլոր մանկական հաւաքական ընդունարաններու տնտեսութեան: Ծնողներէն ալ կը պահանջուի վճարում մը, որուն գումարը կը սահմանուի ըստ պաշտօնական ստախանացուցակի որ նկատի կ'ունենայ ընտանիքներուն եկամուտը:

ՄԱՆԿԱՎԱՐՄԱՆ ԻՐՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մանկամտերները երայսաներ կ'ընդունին կանոնաւոր կերպով գործի կամ այլ պատճառով իրենց գաւառներուն ցերեկուան հոգածութիւնը ապահովելու անկարելիութեան առջեւ գտնուող զոյգերէ:

Գոյութիւն ունին երեք տեսակի մանկամտեր.

ա - Հաւաքական մանկամտերներ (crèches collectives)

բ - Ընտանեկան մանկամտերներ (crèches familiales)

գ - Ծնողական մանկամտերներ (crèches parentales)

ա - Հաւաքական մանկամտերներ կ'ընդունուին մինչեւ չորս տարեկան: Անոնք կանոնաւոր կերպով 20էն 60 երայսայ կրնան ընդունելի: Անոր ներքին դասաւորումն ու մանկավարժական սարքերը կը նպաստեն մանուկներուն մարմնային ու հոգեկան կարողութիւններու արթնութեան: Մանուկներուն խրանմէք յանձն կ'առնուի դետափ մանկան արհեստավարժ զանազան մասնագիտութեան տէր խմբակի մը կողմէ (մանկամշակ, դաստիարակ, մանկաբույժ, մանկախնամ...):

բ - Ընտանեկան մանկամտերները պարագային մանուկները կը պահուին մանկախնամին տունը: Մանկախնամը պաշտօնեան է ֆալապետարանի մը կամ այլ Շրջանային հորիւորդի: Կը վարձատրուի անոր կողմէ: Երայսաները մանկախնամին կը յանձնուին պաշտօնական խողովակով, ան իրաւունք չունի մերժելու իրեն հոգածութեան յանձնուած մանուկները, ոչ ալ կարելիութիւնը ունի իրեն անձնապէս դիմող ծնողներուն ընդառայելու: Կրնայ միաժամանակ առաւելագոյնը երեք երայսայ պահել:

գ - Ծնողական մանկամտերներ կառոյցներ են որոնք կը սնօրինուին ծնողական ընկերակցութեան մը կողմէ, որ կը մասնակցի մանուկներուն ընդունելութեան արհեստա-

ան կը կրէ նաեւ հայրենասիրութեան, հայրենաբաղձութեան գորաւոր շեշտ մը: «Մայրենի»-ն կը յիշեցնէ, բերուս ալ աւելի կը բացօթէ բօքափուրկ կամ կորուստը, տարագիրներուն երկրէն իրենց հետ բերած գաւառային կամ գիւղացիական մշակույթին, մտայնութեան, հողին ու միջավայրին համը ու հորը կրած բառապաշարին: «Մայրենի»-ով մէկ օրէն միւսը գաւառացի, գիւղացի Հայը դարձաւ սփիւռքային ֆալապետ: «Մայրենի»-ն յանախ կը գործածուի «մաքուր» արեւելահայերէն կամ արեւմտահայերէն ըսելու փոխարէն, որ դըպրոցը ստիպուած է, հետո անոր արեւմտական իմաստն որ մօր կողմէ փոխանցուած լեզուն կը յատկանշէ:

Անոնք պարագան Միջին Արեւելի բրքախօս հայ գաղութներուն, որոնց գաւառները բոլորն ալ «մայրենի»-ն ստիպեցան հայկական դպրոց յանախելով: Նոյնը կարելի է ըսել Եղեռնէն ետք Արեւմտահայաստանէն տարագրուած բոլոր Հայերուն որոնց մէջ տեղի ունեցան ներգաւառային խառն ամուսնութիւններ՝ խարբերողին մշեցիին հետ, կամ բրքախօսը գաւառախօս

սին հետ, որոնց գաւառները դըպրոց երբայով «մայրենի»-ն զարձան ու բոլորն ալ մոռցան իրենց մօր աւանդած գաւառայինը:

Եւ դեռ կայ հորիւորդային Հայաստանի պարագան ուր «մայրենի»-ն բռնագրօսիկ ուրիշ իմաստ ունէր: Հոն ալ բոլոր գաւառախօս եւ արեւմտահայախօս Հայերը ստիպողաբար սովետական «մայրենի»-ն ստիպեցան, որուն ֆարգչական մեքենան արեւելահայերէնը «Մայր Հայաստան»-ի պետական լեզուն հռչակելով, «մայրենի» կ'ընդունէր միայն խորհրդային արեւելահայերէնը, արեւմտահայերէնը մահուան դատապարտուած նկատելով: Մըստայնութիւն մը որ դեռ ի գորտէ Հայաստանի Գ. Հանրապետութեան օրով կարգ մը պետական շրջանակներու մօտ:

Արեւմտեան Սփիւռքի տարածքին ընտանեկան կառոյցը այնքան յեղաշրջուած է, որ երկմշակութայնութեան դրութեան մէջ հայերէնը շատ յանախ կրնայ բնածին ըլլալ կամ ընտանեկան լեզուն ըլլալ ու մօր կողմէ փոխանցուած չըլլալ, այլ՝ հօր կամ մեծ հօր, մեծ մօր կամ այլ ընտանեկան պարագայի կողմէ:

ՄԱՆԿԱԽՆԱՄԻ ՀԱՒԱՆԱԳԻՐ (AGREMENT) ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (**)

Իբր մանկախնամ աշխատելու համար պետք է ստիպողաբար ՀԱՒԱՆԱԳԻՐ մը ստացած ըլլա՞ք Շրջանային Ընդհանուր Խորհուրդի նախագահէն:

Դիմումը գոր կը կատարէ՞ չի կրնա՞ր ընդգրկել միաժամանակ անոնի քան երեք երախաներու հիւրընկալութիւն (art. L. 421-4 du Code de l'Action sociale et familiale):

Եթէ հաւանագիրը շնորհուի ձեզի, կը ստանա՞ք նամակ մը որ կը նշուի, ըստ ձեր հիւրընկալման հնարաւորութիւններուն, երախաներուն քանակը գոր կրնա՞ք հիւրընկալել, եւ պահանջեալ պարագային անոնց տարիքն ու հիւրընկալման ժամանակաշրջանը:

ՀԱՄԱՐՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Իբր մանկախնամ աշխատելու համար պիտի դիմէ՞ք հաւանագիր ստանալու կամ ձեր ունեցած հաւանագիրը վերանորոգելու. Այս արհեստին գործունէութիւնը կը կախանայ երախաներ ընդունելու մէջ, անպահանջ տան մէջ, առօրեայ ժամանակաւոր կերպով, վարձատրութեան փոխարէն. անոնք կրնան յանձնուիլ ուղղակի ծնողներուն կողմէ կամ ընտանեկան մանկամտութի պարագային Ընտանեկան Ընդունելութեան (Relais Familial) գրասենեակի մը խողովակով: Այս միջոցով ծրուողներ պիտի կարենան հաշտեցնել իրենց ընտանեկան կեանքն ու աշխատակային ու ընկերային պարտաւորութիւնները:

Մանկախնամը, ծնողին կողքին, լրացուցիչ աշխատանք կը տանի, իրեն յանձնուած երախաներուն հանգրատութեան ու անոնց կրթութեան պատասխանատուն է, սահմանուած աշխատաժամի համար: Պետք է

կարենայ գտնուել տալ մանուկներուն ֆիզիքական ապահովութեան ու հոգածութեան հիմնական պահանջներուն, օժանդակել անոնց ներգաղթական գարգացման, նկատի առնելով ծնողներուն սպասումները կրթական մարզէն ներս:

Որպէս մանկախնամ գործելու համար, պետք է կամ ֆրանսահրպատակ ըլլալ, եւրոպական Միութեան եւ կամ եւրոպական Տնտեսական Գոտիի անդամ երկրի քաղաքացի, իսկ, օտարապատակներուն համար, ուժի մէջ եղող եւ գործելու իրաւունք տուող կեցութեան թուղթի տէր ըլլալ եւ դատապարտուած չըլլալ այս ստպարէզի մէջ գործելու կապուած հարցով:

Ի՞ՆՉՊԵՍ Կ'ԸՆԹԱՆԱՑ ՀԱՒԱՆԱԳԻՐԻՆ ՍՏԱՅՈՒՄ Ը

Շրջանային Ընդհանուր Խորհուրդը կանոնաւոր կերպով տեղեկատուական ժողովներ կը կազմակերպէ այս ստպարէզին վերաբերեալ: Հաւանագիր ստանալու առաջին դիմումին առթիւ, ձեզի խորհուրդ կու տանք որ մասնակցի՞ք այս ժողովներէն մէկուն, որպէսզի անի լազիմա՞ք մանկախնամի դերին ու անոր պատասխանատուութիւններուն, անհրաժեշտ ունակութիւններուն ու երախայ ընդունելու պայմաններուն մասին, գոր այս ստպարէզին մէջ գործողն է կը պահանջուի:

- Որքէ ետք պետք է...
- ուշի ուշով լրացնել դիմում նագիրը.
- բժշկական քննութենէ մը անցնել, վստահ ըլլալու համար որ ձեր առողջական վիճակը ձեզի կը թոյլատրէ երախաներով զբաղիլ.
- ձեզի թերեւ անպարտութեան դատական տեղեկագիր, տան յար-

կէն ներս բնակող լճէն մեծ տարիքի բոլոր չափահասներուն համար.

- ԲՊՔ-ածրարը ապահովագրուած ուղարկել կամ անձամբ յանձնել Շրջանային Ընդհանուր Խորհուրդի նախագահին:

Եթէ ձեր ԲՊՔ-ածրարը լրիւ չէ, 15 օրուան ընթացքին ձեզմէ պիտի պահանջուին պակասող փաստաթուղթերը:

Եթէ ձեր ԲՊՔ-ածրարը լրիւ է, ըստացագիր մը կը դրկուի կամ կը յանձնուի ձեզի: Ստացագիրին վերայ նշուած թուականէն սկսեալ, Շրջանային Ընդհանուր Խորհուրդի նախագահը երեք ամիս ժամանակ կ'ունենայ ձեր դիմումին ընդատուելու:

Այս ժամանակաշրջանին, արժեւորում մը պետք է կատարուի մարզային յատուկ սպասարկութիւններուն կողմէ, որպէսզի կարելի ըլլայ գնահատել ձեր տրամադրած ընդունելութեան պայմանները, նկատի ունենալով ձեր դիմումը, երախաներուն թիւը գոր կարող է՞ք ընդունիլ եւ ի պահանջեալ հարկին, երախաներուն տարիք եւ ընդունելութեան յատուկ ժամանակաշրջանը:

Ձեր հետ մէկ կամ մի քանի տեսակցութիւններ, ինչպէս նաեւ ձեր տունը այցելութիւն մը տեղի պիտի ունենայ, որոնց նպատակն է գնահատել.

- ձեր տրամադրելիութիւնը եւ ձեր կազմակերպուելու ու յարմարելու կարողութիւնը.

- ձեր հարձրակցութեան եւ երկխօսութեան կարողութիւնը եւ խօսակցական ֆրանսերէն լեզուին տիրապետումը.

- ձեր դիտարկելու կարողութիւնն ու լեզուով անհատապէս անէն մէկ երախայի կարիքներու, ծնողներուն սպասումները նկատի առած,

- մանկախնամի դերին ու պատասխանատուութիւններուն մասին ձեր ունեցած գիտութիւնը.

Եթէ ձեր տան վիճակը, մեծութիւնը եւ մթնոլորտը կը թոյլատրեն որ ապահովուին անչափահասներուն համգիտը եւ անվտանգութիւնը, նկատի առած անոնց թիւն ու տարիքը, որոնց համար հաւանագիրի դիմումը կատարուած է եւ եթէ կարող է՞ք կանխորոշել բոլոր այն հաւանական վտանգները գոր ձեր բնակարանը կը ներկայացնէ փոքրիկներուն եւ նախատեսել այն անհրաժեշտ յարմարանքները հաւանական արկածներու առաջին անոնց:

Նկատի պիտի առնուին նաեւ ձեր ընտանեկան պարագաները եւ անոնց համարախորհուրդը ձեր աշխատանքային ծրագրին:

Եթէ երեք ամուսն ժամանակաշրջանի աւարտին, պատասխան ըստացած չըլլա՞ք, լոյսեայն հաւանագիրի մը տիրացած կ'ըլլա՞ք, որ Շրջանային Ընդհանուր Խորհուրդին նախագահին կողմէ վկայագիրով մը կը հաստատուի:

Հաւանագիրի մերժումին պարագային ծանուցանող նամակը կը բացայայտէ զրգայատմաները, ինչպէս նաեւ մերժողական որոշումը վերաքննութեան ենթարկելու համար ձեզի յանձնարարուած միջոցներն ու պայմանաժամերը:

որուն կէտը պետք է անցընէ՞ք նախքան ձեր երախայ ընդունելը եւ մընացեալը՝ աշխատանքի սկսելուն առաջին երկու ամիսներուն ընթացքին: Ինչպէս նաեւ շտապ օգնութեան տարրական խնամքը գիտնալու:

Յարգելու հաւանագիրին տրամադրութիւնները երախաներու քանակին ու ընդունելութեան եղանակին վերաբերեալ (միաժամանակ 3 երախայ եւ ընդամէնը՝ 6, բացի յատուկ արտօնութեան պարագաներէն). տունէն ներս, երեք տարեկանէն վար ձեր գաւակներուն, թռններուն, կամ ազգականներու գաւակներուն ներկայութիւնը, անոնց թիւին չափով կը գեղջէ հաւանագիրին թոյլատրած երախաներ ընդունելու քանակը:

Շրջանային Ընդհանուր Խորհուրդի նախագահին տեղեկացնելու բոլոր այն կարեւոր անցուղիները, ձեր ընտանեկան վիճակին ու գործունէութեան վերաբերեալ (նոր երախաներու ժամանում ու մեկնում, արկածներ, մահ...):

Եթէ մասնաւոր անձի մը կողմէ գործի կոչուած է՞ք, անձնական մասնագիտական պատասխանատուութեան ապահովագրութիւն ունենալ պաշտպանուելու համար բոլոր այն վնասներուն դէմ գորս երախաները կրնան յարուցել իրենց ընկերակիցներուն եւ անոնց հանդէպ որոնց գործը իրենք կրնան ըլլալ:

Համակերպելու աշխատանքային օրէնագրութեան տրամադրութիւններուն, եւ եթէ անհատի մը կողմէ աշխատանքի կոչուած է՞ք՝ համակերպելու մանկախնամներու արհեստակցութեան պայմանագրութեան (Convention collective), որուն գործադրութիւնը ստիպողական է: Ինչպէս նաեւ գործատիրոջ հետ կնիւնա՞ք աշխատանքային պայմանագիրին:

Եթէ տեղափոխուի՞ք, ձեր նոր հասցէն հաղորդէ՞ք նոր բնակութիւն հաստատած մարզի Ընդհ. Խորհուրդի նախագահին, որ ամիս մը պայմանաժամ կ'ունենայ այցելելու ձեր նոր բնակարանը եւ հաստատելու ձեր հաւանագիրին լրագործութիւնը:

Յարգելու ձեր հաւանագիրին կցուած ու ձեզի յղուած մանկախընամի գրքոյկը:

ՀԱՒԱՆԱԳԻՐԸ ձեզի թոյլ պիտի տայ՝

Մասնագիտական աշխատանք տանելու, ուղղակի ծնողներու կողմէ կամ ընտանեկան մանկամտութեան կառույցի կողմէ գործի լրծուելով.

օգտուելու ընկերային զանազան առարկայութիւններէ՝ վնասուած արձակուրդներ, ընկերային ապահովութիւն, ծերութեան, գործազրկութեան, եւ այլ ընկերային հատուցումներէ:

օգտուելու տուրքի յատուկ դրուածքէն,

օգտուելու լրացուցիչ արհեստագիտական վարժընթացներէ . . .

(**) Այս դրութիւնը Հաւանագիր ստանալու դիմում նագրին բացառօրոգական բաժնէն առնուած է: Դիմում նագիրը պէտք է Շրջանային Ընդհանուր Խորհուրդի նախագահին յղուի (Cerfa 13394*01):

վարժ անձնակազմի օգնութեամբ (մանկավարձ, մանկավարժ, օգնականներ): Ընդունուող մանուկներուն քանակը սահմանուած կը մնայ 20ով:

Ծնողական մանկամտութիւնը կը ջանան մանուկներուն արթնութիւնը քաջալերել ծնողներու մասնակցութեամբ:

Բ - ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մանուկը կրնայ՝
ա - ընդունուիլ մանկախնամի մը տան մէջ

բ - պահպանուիլ ընտանեկան յարկին մէջ ծնողներու կողմէ վարձատրուած անձի մը կողմէ:

Առաջին պարագային, մանկախընամը քաջալերուած պարագային մը տրուած ընտանեկան մանկամտութի մը աշխատատեղը ըլլալով հանդերձ, իր տան մէջ կ'ընդունի մանուկները. կրնայ նաեւ վարձատրուելու ուղղակի ծնողին կողմէ: Այս պարագային մանկախնամը իր տան մէջ կրնայ ընդունիլ երեք երախայ

(*) Սոյն տեղեկատուական յօդուածը առնուած է Ընտանեկան Յատկազումներու Գանձանակի (CAF) Համարձակողական կազմէն, հասցէ՝ www.caf.fr

ԱՐԱՅԱՄ ԱԼԻՔԵԱՆԻ ՏԵՂԸ ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երեւանի Սարգիս Սաչենց-Փրին-
թինֆո հրատարակչատունը հոյա-
կապ նուէր մը ըրած է մեզի այս
տարի. հրատարակչատունը է Արքա-
համ Ալիքեանի բանաստեղծութիւն-
ներու և թարգմանութիւններու հա-
տարար մէջ հատորը, 478 միջակ
չափի էջերու մէջ, իրեն յատուկ այն
նուրբ ճաշակով, որ գերբը կը վե-
րածէ ակնահաստայ առարկայի:
Չայն ձեռները եւ դիտելը զգայա-
կան հաճոյք է ընթերցողի իմա-
ցական տօնէն առաջ: Հայաստանի
Ազգային ժողովի նախկին նախա-
գահը՝ Պ. Տիգրան Թորոսեանը, իր
մասնակցութիւնը բերած է բանի
այս կոչումին՝ մեկենաս դառնա-
լով հրատարակչատունը:

Կըսուի, թէ Ալիքեանին երկրորդ
հատոր մըն ալ պիտի հրատարակ-
ւի շուտով: Երանի այն ատեն հե-
ղինակը առիթ ունենայ ստուգել
սրբագրութիւն կատարելու, որ
պէտքի մեր հրատարակչատունը
անխուսափելի վերադարձնուի նուա-
զագային իրենց ներքին հնարաւորու-
թիւն ստեղծուի:

Այս հատորը գումար մըն է յոյզի
եւ խոհի վախճանամասայ արտայայ-
տութեան: Ուսումնամեակին առի-
թով մէկտեղելով իր վաստակին
յատկանշական էջերը՝ բանաս-
տեղծ - թարգմանիչը վերջնական
իր տեղը կը ճշդէ կարծես մեր իրա-
կանութեան և գրականութեան մէջ:

Այս տեղը շատ որոշ չէր երկար ա-
տեն Ալիքեանի վարած կեանքին եւ
ստեղծած թերթիկութեան ընթացիկ
պատճառով: Անվայր մարդ էր ան
մեղի համար եւ անկայք բանաս-
տեղծ: Քաղաքէ քաղաք փոխադրու-
ած ծնունդէն ի վեր, ո՛չ խորհրդա-
հայ, ո՛չ սփիւռքահայ՝ իր թերթի-
կութեամբ, կարծես քանկերովը
գարու սկիզբի արեւմտահայ բա-
նաստեղծութեան աւանդը կը շա-
րունակէր ժամանակի եւ միջոցի
պատուարներէն անդին:

նետեց Մոսկուա, ուր մնաց մինչեւ
Սորհրդային Միութեան փլուզու-
մը:

Մոսկուայի մէջ ալ գաղթական էր
Ալիքեան: Կը բնակէր կեղերնի պը-
տիկ մէջ յարկաբաժինը, կը դասա-
խօսէր Մաքսիմ Կորբի համալսարա-
նին մէջ, ուր ուսանած ալ էր,
թարգմանութիւններ կ'ընէր, կ'ա-
խտակցէր հայրենի մամուլին եւ
գիրքը կը հրատարակէր, եթէ եւ երբ
հնարաւորութիւնը ունենար: Սրով-
հետեւ, իրեն, ինչպէս շատերուն
համար, հրատարակուիլ մեծ դժ-
ւարութիւններու կապուած էր:

Իննսունական թուականներու ըս-
կիզբէն ի վեր Ալիքեան վերադար-
ձած է Լիբանան, կը գտնուի այն
վայրը, որ հարազատ եղած էր ի-
րեն: Երեւանը, Մոսկուան իր տե-
ղերը չէին, չէին եղած: Լիբանանը
այլ էր քառասունական թուական-
ներուն. պատանութեան իր միջա-
կային էր, ինքնիրագործումի ճի-
գերուն վկան: Բանաստեղծը գտած
էր վերջապէս իր տեղը:

Կարելի չէ ըսել: Տարբեր էր ա-
մէն բան:

Պուրճ-Համուտը, ուր բնակեցաւ
ան սկիզբը, այնքան փոխուած էր,
որ արեւելումի դժուարութիւն ու-
նեցող Ալիքեանը չէր կրնար իսկ հօ-
րենական իր տան թողը երթալ ա-
ռանձին: Փարսյան ու Պիքֆայան,
ուր բնակեցաւ յետագային, ընդար-
ձակուած էին աներեւակայելի չա-
փերով, Պայտան, որ իր յաջորդ
բնակավայրը եղաւ Լեռնայի բնա-
նի մէջ, գոյութիւն իսկ չուէր իր
պատանութեան շրջանին իբրեւ ծա-
նօթ գիրք:

Աւելին. Պէյրութէն հիւսիս տա-
նող ճանապարհը, որ պտոյտներու
դասական սկզբնակէտ էր, փոխ-
ուած էր անճանաչելիութիւն: Ժամա-
նակին նեղ, հին ճամբայ մըն էր
ան, որուն երկայնքին սլքաւով
կ'երթայինք Տպայէ եւ Նահը ըլ-
կալ: Ծովեզերքի կողմը դարաւոր
ծառեր կային, զորս Ալիքեան կ'ան-
ւանէր մէկ առ մէկ: Նախկին քնա-
րական վայրը վերածուած էր երկ-
կողմ մայրուղիի, ճամբան լայնցած
էր ծովուն կողմէն եւ ծառերը
յայտնուած էին մայրուղիի կեղեր-
նը...

Մարդը, ուրեմն, օտար էր միշտ
շրջապատին:

Տարիներու ընթացքին, հակա-
ռակ մենութեան ու լքումի ահաւոր
պահերու, որոնց արձագանքը կը
գտնենք այդ օրերու իր թերթում-
ներուն մէջ, ան իր ուրոյն ուրոյն
ստեղծեց՝ ինչպէս ըրած էր ամբողջ
կեանքի ընթացքին, մտերիմ սեփա-
կան անկիւն մը, ուր ապաստանե-
ցաւ ստեղծագործելու համար: Եւ
թերթողագիրքերը յաջորդեցին ի-
րարու. Ծղրիթը, 1993ին, Հեգ իրի-
կուն, 1995ին, Փարսյան, 1998ին,
Ծղրիթը, նորի՛ն, 2004ին: Բանաս-

տեղը իր վերջնական կայքը հաս-
տատած էր մայրենի թերթողու-
թեան մէջ:

Հեգ իրիկուն խորագրի կրկնու-
թեան կարելի է հետեւեալ բացատ-
րութիւնը տալ. վերջին հատորը
հատարար ժողովածու է եւ բնա-
կանօրէն կրնայ կրկնել արդէն գոր-
ծածուած վերնագիր մը: Իսկ «հե-
գ»ը՝ ամէնէն յարմար որակականն է
հաւանօրէն Ալիքեանի բանաստեղ-
ծութեան գերակշիռ մասը բնորո-
շելու համար. ան բնութեան մըր-
մունջ է, յոյզի եւ խոհի հանդարտ
արտայայտութիւն, ինքնասոյզ հո-
գի ինքնաբաւ ապրում: «Իրիկու-
ն»ը կրնայ ակնարկութիւն ըլլալ
նաեւ ուսումնամեակի տարիներ-
ուն, որոնք իրիկնային լոյսով կ'օ-
ծեն իր կեանքը:

Ժողովածուի յառաջաբանին մէջ
որ կարեւոր է մէկէ աւելի պատ-
ճառներով, Ալիքեան կ'անդրադառ-
նայ բանաստեղծութեան գերին իր
կեանքին մէջ, արուեստի եւ յատ-
կապէս թերթիկութեան ըմբռնու-
մին, աշխարհընկալումի իր ընդհա-
նուր կեցուածքին:

Յատկանշական է լեզուի մասին
իր ըսածը.

Քերականութեան օրէնսդիր պատ-
մուհան ու պատմագագ մէկ կողմ,

Գրեց՝

ԳՐԻԳՈՐ ԾԱՅԻՆԵԱՆ

Իմ լեզուս նարին Սրբագրութիւն
Արքայական Հայերէնն է:

Ամբողջական այս հայերէնը ո՛չ
միայն մնայուն կայքն է իր թերթի-
կութեան, այլեւ արտայայտու-
թեան անզուգական միջոցը՝ արեւ-
մըտահայերէնը գտած ըլլայ թէ՛
արեւելահայերէնը: Երկու պարա-
զաներուն ալ, ճշգրիտ ու հարազատ
է այս լեզուն: Իր արեւմտահայերէ-
նը միաժամանակ ճոխ է և բնական,
երբեմն արեւելահայերէնի յատուկ
ձեւերով («ղբութիւն»՝ «վիճակ»ի
տեղ, «կիսեթ»՝ «բաժնեթ»ու փոխա-
րէն), իր արեւելահայերէնը՝ պատ-
նաստեղծ արեւմտահայերէնի բա-
ռապաշարային հարստութեամբ ու
արտայայտչական նրբութիւններով
(«գունեան» բառով, օրինակ, «գու-
նաւոր»ի, «գունագեղ»ի տեղ):

Ալիքեան իր յառաջաբանին մէջ
կը խօսի նաեւ բառերու հանդէպ ու-
նեցած իր վերաբերումին մասին:
Կը խոստովանի, որ «տարօրինակ
սիրով» մը կը սիրէ գանոնք, «Վօ-
տիկ ֆիզիքալիան հեշտախփին ու հո-
գեկան վերացման» ու բացատրած
կ'ըլլայ մենագրութեան մօտեցող
իր հակումը ճիշդ, այլ հազուադիւ-
րաբար գործածելու, առանց նկատի
ունենալու ընթերցողներու ծանօ-
թութիւնը անոնց: Բանաստեղծու-
թեան մը մէջ («Ստուգիչ կշեռք»),
Ալիքեան դառն կատակի առարկայ
կը դարձնէ այս իրողութիւնը, ու-
րիշի մը մէջ ալ՝ («Անդրադարձ»)՝
կը պաշտպանէ հայկազան բնիկ
բառերու իր ընտրանքը:

Պէտք է հաստատել, որ հազուա-
գիւտ բառերու գործածութիւնը ար-
գելք չէ թերթումի առաջին ընկա-
լումին: Իսկ անկէ անդին, անոր մը-
տերիմ ըմբռնումին համար մեծ զո-
հողութիւն մը չէ բառարանի օգտա-

գործումը: Մանաւանդ որ ան կապ-
ւած է գեղարուեստական բացառիկ
